Azg
armenian daily

27 ՓԵՏՐՈՒԱՐ 2004 ՈՒՐԲԱԹ 34 (2959)

Գրադարան

Բոսնիայում ջախջախվեց Մակեդոնիայի նախագահի ինքնաթիռը

Բոսնիայի ու Հերցեգովինայի տարածքում երեկ կեսօրին ռադարների էկրաններից անհետացավ Մակեդոնիայի նախագահ Բորիս Տրայկովսկու ինքնաթիռը: Ֆրանսայրեսը հաղորդում է, որ նախագահի «Բիչֆրաֆթ-200» ռեակտիվ օդանավը վայրէջք կատարելուց առաջ Ստոլակ քաղաքի շրջանում բախվել է խոտաբույսերի բոսնիական Մոստար քաղաքի օդանավակայանում: Բոսնիայի ՆԳՆ-ում լրագրողներին հայտնեցին, որ աղետի պահին Ստոլակի եւ Մոստարի շրջաններում եղել է վատ եղանակ՝ մառախուղ եւ անձրեւ: Աղետի շրջանից լսվել է ուժգին պայթյուն: Ավելի ուշ փրկարար ծառայությունների աշխատակիցներն աղետի վայրում գտան ինքնաթիռի բեկորները:

Մակեդոնիայի պաշտոնական աղբյուրները ենթադրում են, որ ինքնաթիռում եղած բոլոր մարդիկ զոհվել են: 47-ամյա նախագահ Տրայկովսկին եւ նրա հետ մեկնած կառավարական պատվիրակության 8 անդամները Բոսնիայում պետք է մասնակցեին Նվիրատու երկրների միջազգային խորհրդաժողովին:

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏ

Փետրվարի դասերն ու խորհուրդը

ԿԻՄ ՉԱԲՐԻԵԼՅԱՆ

Փետրվար ամիսը ղարաբաղյան շարժման տարեգրության մեջ հագեցած է հաղթական ու ողբերգական իրադարձություններով: Եթե այս փաստը բնութագրական չդարձնենք Շարժման ողջ ընթացքի համար, համենայն դեպս, կարող ենք հաստատել իրադարձություններ, որոնք պատմության համար ընդգծված էջեր են:

1988-ի փետրվարի 13-ին Ստեփանակերտի գլխավոր հրապարակը դարձավ այն սկիզբը, որով ոչ միայն շարունակվեց ու գրվեց ազատագրական պայքարի տարեգրությունը, այլեւ առհասարակ՝ արձանագրեց խորհրդային կայսրության փլուզման արշալույսը: Պատահական չէ, որ նախկին Խորհրդային Միության ղեկավարությունն անմիջապես արձագանքեց ղարաբաղյան պոռթկմանը՝ զգալով, որ Ղարաբաղում ծայր առած ազգային-ազատագրական պայքարի կրակը կտեղափոխվի նաեւ միության այլ տարածքներ:

Դրանից մեկ շաբաթ հետո ԼՂ մարզային խորհուրդը վավերացրեց ժողովրդի ինքնորոշման կամքը: Պատմական այս ակտը եւս աննախադեպ էր կայսրության գոյության ողջ ընթացքում: Անմիջապես տարածաշրջան, մասնավորապես Ստեփանակերտ աճապարեցին քաղբյուրոյի անդամները, որոնց ներկայությունը ոչնչով չկարողացավ ազդել ժողովրդի ընտրության վրա: Փոխարենը՝ նրանց գալուստն ավելի ոգեւորեց Ադրբեջանի ազգայնական ուժերին՝ վերջիններիս մեջ արթնացնելով վայրենի բնազդը:

Տես էջ 2

ՄՈՍԿՎԱ

Համաշխարհային հայկական կոնգրեսի հայտարարությունը Հայաստանի զինված ուժերի լեյտենանտի գազանաբար սպանության կապակցությամբ

Համաշխարհային հայկական կոնգրեսը ցասումով դատապարտում է Հունգարիայի մայրաքաղաքում 26-ամյա հայ լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի գազանաբար սպանությունը: Հրեշավոր այդ ոճիրը գործեց ադրբեջանցի ավագ լեյտենանտը, Բաքվի զինվորական ուսումնարանի եւ Թուրքիայի ցամաքային զորքերի բարձրագույն դպրոցի սանը: Դեպքը տեղի ունեցավ Բուդապեշտում, ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում անցկացվող դասընթացների ժամանակ:

Երիտասարդ լեյտենանտի կացնահար գլուխը մեզ հիշեցնում է Թուրքիայում եւ Ադրբեջանում հայերի նկատմամբ գործադրված ճիվաղային արարքները: Տվյալ սպանությունը նման է այն հանցագործություններին, որ ադրբեջանցի ջարդարարները հայերի հանդեպ գործեցին Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում եւ այլ վայրերում: Դա տրամաբանական հետեւանքն է անպատասխանատու ռազմաշունչ այն խառնվածքի, որին վերջերս ակտիվորեն մասնակցում են նաեւ Ադրբեջանի պաշտոնական իշխանությունները: Դա հետեւանքն է հակահայկական այն սանձարձակ հիստերիայի եւ ատելության, որոնցով համակված է ադրբեջանական ողջ հասարակությունն այն պահից, երբ Ղարաբաղի հայ ժողովուրդը նվաճեց ազատություն եւ անկախություն:

Հայ սպայի սպանությունը տեղի ունեցավ Բաքվում հայերի հանդեպ խորազվող ատելության, հայերի Տեղապահության ավանդական թուրք-ադրբեջանական հաղթականության շարունակման, մարդկային էության ամենատարրական նորմերի ոտնահարման հողի վրա: Բուդապեշտյան սպանությունը դուրս է գալիս սովորական հանցագործության շրջանակներից. դա հաղթական սպանություն է: Այն վկայում է, որ պաշտոնական իշխանությունների կողմից գիտակցաբար հրահրվող ռեւանշիզմը հասարակական գիտակցության մեջ արդեն փոխակերպվել է ռասիզմի եւ հայատյացության:

Այդ հրեշավոր ոճրագործության մեջ նկատվում է Լեռնային Ղարաբաղի շուրջը ծագած հայ-ադրբեջանական դիմակայության էությունը: Այն շոշափելիորեն ցույց է տալիս, թե Լեռնային Ղարաբաղի հայերի համար ինչ է նախապատրաստվում «ընդհանուր ադրբեջանական պետության» սահմաններում:

Ձայրայր են հարուցում մարդասպանին պաշտպանության տակ առնելու, այդ ճիվաղությունն արդարացնելու Ադրբեջանի պաշտոնական իշխանությունների ողորմելի եւ անբարո փորձերը:

Ադրբեջանի իշխանությունները լիակատար պատասխանատվություն են կրում Բուդապեշտում տեղի ունեցածի համար: ՆԱՏՕ-ն չի կարող եւ չպետք է աչք փակի այդ հրեշավոր հանցագործության վրա: Հերթական լռությունը լոկ կխրախուսի ցեղասպանության նոր քայլերը:

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Համաշխարհային հայկական
կոնգրեսի նախագահ
25 փետրվարի, 2004 թ.
Մոսկվա

Եվրոպական խորհրդարանը մերժեց ադրբեջանամետ առաջարկը

Փետրվարի 26-ին Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստում ընդունվեց «ԵՄ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ» բանաձեւը, որը մշակել էր «կանայների» կուսակցության անդամ Պեր Գարբոնը:

Ի թիվս այլ հարցերի բանաձեւը արծարծում էր նաեւ տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման հարցը եւ պարունակում էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված վիճարկելի դրույթ՝ առաջարկելով ԵՄ-ին սատարել Բաքու-Երեւան-Նախիջեւան երկաթգծի վերագործարկման դիմաց «գրավյալ տարածքները» վերադարձնելու ծրագրին:

Եվրոպական խորհրդարանի մեծամասնություն կազմող եվրոպական ժողովրդական (քրիստոնեա-ժողովրդավարական) եւ եվրոպական սոցիալիստներ կուսակցությունները դեմ էին այդ մոտեցմանը՝ եւ լիագումար նիստին այդ դրույթը բանաձեւից հանելու համար արդեն ներկայացրել էին համապատասխան առաջարկ:

Արդյունքում, եվրոպական խորհրդարանը ձայների զգալի մեծամասնությամբ մերժեց Ադրբեջանի կողմից եվրոպական ասյաններում առաջ մղվող եւ որպես քարոզչական զենք կիրառվող առաջարկը՝ որպես հակամարտության կարգավորման մեջ փուլային լուծման անցնելու փորձ:

Իր այդ որոշմամբ ԵՄ-ն եւս մեկ անգամ հրաժարվեց ԼՂ-ի հարցում միակողմանի որոշում ընդունելուց եւ հիմնահարցում ավելորդ բարդություններ ստեղծելուց: Բազմաթիվ պատգամավորներ համաձայն էին նաեւ, որ բանակցությունները պետք է շարունակվեն ձեռք բերված մակարդակի վրա, եւ միայն երկխոսության շարունակումը կարող է ապահովել խաղաղ կարգավորում:

Բանաձեւի մեկ այլ դրույթով վերահաստատվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ եվրախորհրդարանի 1987 թ. բանաձեւը:

Լիագումար նիստում մերժվեց նաեւ շրջափակման մասին դրույթից Թուրքիայի անունը հանելու եւ միայն Ադրբեջանը թողնելու մասին առաջարկը:

Սակայն բանաձեւը չի սահմանափակվում հակամարտությունների կարգավորման հարցով, այն պարունակում է հարցերի շատ լայն շրջանակ եւ առաջարկում է կարեւորագույն քաղաքական ռազմավարություններ:

Առաջին հերթին դա վերաբերում է ԵՄ-Հարավային Կովկաս հարաբերությունների հետագա զարգացմանը, բանաձեւը հստակ եւ վճռականորեն կողմ է արտահայտվում «Նոր հարեւանություն» ծրագրում Հարավային Կովկասի երկրներն ընդգրկելու եւ տարածաշրջանում ԵՄ-ի ներգրավվածությունը ավելացնելու մասին:

Առաջին անգամ խորհրդարանն ամենայն լրջությամբ եւ խորությամբ անդրադարձավ էներգետիկ խնդիրներին եւ Մեծամորի ԱԷԿ-ի փակումը դրվեց ոչ թե որպես պահանջ, այլ կապվեց տարածաշրջանում էներգետիկ բնագավառի ընդհանուր զարգացման եւ Բաքու-Ջեյհան նավթատարի կառուցման հետ: Շեշտվեց նաեւ, որ Մեծամորի հարցը հատկապես նուրբ է, հաշվի առնելով Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից շարունակվող շրջափակումը:

Վալտեր Շվիմերը դատապարտում է հայ սպայի «դաժան, վայրագ ու ահասարսուռ» սպանությունը

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Վալտեր Շվիմերը եւ ԵԽ նախարարների պատվիրակների ներկա նախագահող դեսպան Յոհաննես Լանդմանը ցավակցական նամակներ են հղել ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Քրիստիան Տեր-Ստեփանյանին՝ Բուդապեշտում հայ լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի սպանության կապակցությամբ: Հայ սպայի սպանությունը որակելով որպես «դաժան, վայրագ ու ահասարսուռ», Շվիմերը եւ Լանդմանն իրենց խորին ցավակցությունն են փոխանցել ադրբեջանցի սպայի կողմից կացնահարված հայ սպայի ընտանիքին եւ հարազատներին: Նրանք հույս են հայտնել, որ հունգարական իշխանությունները կգործադրեն բոլոր ջանքերը՝ բացահայտելու այս ոճրագործության բոլոր հանգամանքները:

Մինսկի խումբը՝ «նոր գաղափարներով եւ կարծիքներով»

Բաքվում ԱՄՆ դեսպան Ռենո Հարնիքը լրագրողներին ասել է, որ տարածաշրջան կատարելիք հաջորդ այցի ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խումբը հակամարտության կողմերին ներկայացնելու է «նոր գաղափարներ եւ նոր կարծիքներ», հաղորդում է ադրբեջանական «Ասսա-Իրադա» գործակալությունը: «Ոչ հակամարտության կողմերը, ոչ էլ ԵԱՀԿ ներկայացուցիչները չեն կարող որեւէ բան ասել (Լեռնային Ղարաբաղի) կարգավորման առաջարկների եւ մանրամասնությունների մասին: Ակնկալվում է, որ նոր գաղափարներ եւ նոր կարծիքներ են առաջարկվելու: (Ադրբեջանի եւ Հայաստանի) նախագահները եւ արտգործնախարարները ծանրութեթեւ անելով այդ գաղափարները կցուցաբերեն նոր մոտեցում», ասել է Հարնիքը:

Երեւան բերվեց կացնահարված Գուրգեն Մարգարյանի դին

Բողոքի ցույց Ստեփանակերտում

Երեկ կեսօրին Երեւան բերվեց Բուդապեշտում ադրբեջանցի սպայի կողմից կացնահարված լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի դին: Գազանաբար սպանված հայ սպային «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորեցին հազարավոր հայեր, հաղորդում է «Ռեգնում» գործակալությունը: Հավաքվածները պահել էին «Անպատժելիությունը ծնում է ահաբեկչություն եւ ցեղասպանություն», «Ոչ գազանությանը եւ ցեղասպանությանը», «Պահանջում ենք արդար պատիժ ադրբեջանցի մարդասպանին» պաստառներ: ՀՀ պաշտպանության փոխնախարար Միխայել Գրիգորյանը ասել է, որ ադրբեջանցիների նման վարքագիծը նորություն չէ, «այդպես է եղել 100 տարի առաջ, հայերին միշտ փորձել են սպանել գիշերով եւ կացնով»: «Գուրգենին սպանեցին գիշերը, եւ դա թուրքի իսկական վարքագիծն է: Բառեր չկան ասելու՝ ադրբեջանցի Սաֆարովը չի կարող համարվել սպա, նա պարզապես սոսոր է եւ վախկոտ», ասել է Գրիգորյանը:

Մինչ Երեւանում դիմավորում էին Գուրգեն Մարգարյանին, ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում բազմահազարանոց հանրահավաք է տեղի ունեցել արտգործնախարարության շենքի դիմաց: Հավաքվածները դատապարտել են հայ սպայի անմարդկային սպանությունը, բողոքի բաց նամակ հղել ԵԱՀԿ Մինսկի խմբին, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովին, ԵԽ ԽՎ-ին, ՆԱՏՕ-ին: Ուղերձում մասնավորապես նշվում է, որ հայ սպայի կացնահարումը դարձավ Ադրբեջանի իշխանությունների վերջին տարիների հակահայ քարոզչության եւ ռազմատենչ հայտարարությունների տրամաբանական հետեւանքը: ԼՂՀ արտգործնախարար Աշոտ Ղուլյանը դարաբաղցի երիտասարդների եւ ուսանողական կազմակերպությունների բողոքի ցույցը համարել է բնական՝ ընդգծելով, որ հայատյացությունն Ադրբեջանում դրվել է պետական քաղաքականության մակարդակի վրա:

Հետ է վերցվել զինապարտության օրենքի նախագիծը

Ուսանողների բողոքն արդյունք տվեց: Երեկ առավոտյան մամուլի ասուլիս հրավիրած «Հանուն գիտության զարգացման» նախաձեռնող խմբի անդամները ընդում էին, որ պայքարելու են այնքան ժամանակ, քանի դեռ «Զինապարտության մասին» այս նոր օրենքի նախագիծը շրջանառության մեջ է:

Գրեթե նույն ժամին կառավարության նիստի ժամանակ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հայտարարել է, որ նախագիծը հետ է վերցվում, այդ մասին արդեն նամակ է ուղարկված Ազգային ժողովի նախագահին:

«Նիստի ընթացքում վարչապետը կառավարության անդամներին տեղեկացրել է նիստից առաջ ուսանողության հետ ունեցած հանդիպման եւ իր կայացրած որոշման մասին, այն է՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը կառավարությունը ԱԺ-ից հետ կկանչի», - գրված է ՀՀ կառավարության ինտերնետային էջում: Նիստի ժամանակ վարչապետն իր դժգոհությունն է հայտնել կառավարության անդամներին հիշյալ օրենքի նախագիծը ժամանակին եւ պատշաճ կարգով հասարակությանը չներկայացնելու, լայն լսումներ, քննարկումներ չծեռնարկելու համար:

Պաշտոնական էջում գրված է նաեւ, որ նիստում անհասկանալի եւ անընդունելի է դիտվել կրթության եւ գիտության նախարարության ինքնամեկուսացված կեցվածքը, ուսանողության հետ շփումներից խուսափելը իր իսկ ոլորտի քաղաքականությանը վերաբերող հարցի քննարկումների ժամանակ:

ԱԺ պատգամավոր Վազգեն Խաչիկյանի խոսքերով՝ նախագծի հետ կանչումը պայմանավորված էր նախ երիտասարդների շրջանում առաջացած հուզումներով, երկրորդ՝ օրինագծի ոչ լիարժեք լինելով: «Խնդիր էր՝ ճիշտ է տարկեսման մեկ իրավունք տրամադրել երիտասարդին, թե 18 տարեկանից բոլորին զորակոչել բանակ, - ասաց նա: - Այս նախագիծը կարծես վերջնական լուծման ճանապարհին մի փուլային տարբերակ էր, որը կարելի է ասել նաեւ, դեռեւս լավ մշակված չէր: Այդ իմաստով ճիշտ էր օրինագիծը շրջանառությունից հանելը»: Ըստ նրա՝ կառավարությունը թերեւս կսկսի մի գործընթաց, որում ներգրավված կլինեն գիտական, մանկավարժական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ինչ վերաբերում է ասուլիսին, ապա այդ ժամանակ նախաձեռնող խմբի անդամ Արարատ Միրզոյանն ասաց, որ կոչ են անում բոլոր ուսանողներին, նրանց ծնողներին, այն մարդկանց, ովքեր հետաքրքրված են օրենքի նախագծով, մասնակցել այսօր կայանալիք հանրահավաքին:

«Խնդիրը մասամբ լուծված է, բայց մենք աշխատելու ենք քննարկումների ընթացքում շահագրգիռ կողմերից մեկը լինել», ասաց Արամ Անանյանը: Նախաձեռնող խմբի անդամները ողջունում են վարչապետի քայլը եւ ասում, որ գնալու են երկխոսության:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Սխալը ձե՛ր մեջ փնտրեք

Վերջ տանք հայկական բանակը վարկաբեկելու միտումներին

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանը երեկ հանդիպել է հայ ուսանողներին եւ տեղի տալով ապագա հանճարեղ մեր գիտնականներին, որոնցել. «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը կառավարությունը հետ է կանչում: Վարչապետն իր դժգոհությունն է հայտնել կառավարության անդամներին՝ օրենքի նախագիծը ժամանակին եւ պատշաճ կարգով հասարակությանը չներկայացնելու, լայն լսումներ, քննարկումներ չծեռնարկելու համար, որի հետեւանքով նախագիծը չէր արժանանա սխալ մեկնաբանությունների եւ հակասական գնահատականների:

Քանի դեռ Հայաստանում իշխանությունները ժողովրդի շրջանում չեն վայելում նվազագույն վստահություն, ամեն մի օրենքի նախագիծ կարող է արժանանալ «Զինապարտության մասին» օրենքի ճակատագրին: Անշուշտ, վարչապետը կարող է դժգոհ լինել եւ մեղքը բարդել կառավարության անդամների վրա՝ օրենքի նախագիծը «պատշաճ կարգով հասարակությանը չներկայացնելու, լայն լսումներ, քննարկումներ չծեռնարկելու» պատճառաբանությամբ:

Այսօրվա հայ հասարակությունը չի վստահում երկրի իշխանություններին: Եվ քանի դեռ իշխանությունները չեն ձեռնարկում քայլեր, անգամ անարդար ընտրություններից հետո ինչ-որ չափով վերագտնելու հավատը, նրանք հեռագայում էլ կանգնելու են լուրջ դժվարությունների առաջ: Լավագույն օրենքի նախագծի դեպքում անգամ: Քանի որ ժողովրդի շրջանում վստահության որեւէ պաշար չունեցող կառավարությունը, նախագահ Քոչարյանը կարող են իրենց դեմ հանել ժողովրդին՝ սրանից բխող բոլոր հետեւանքներով:

Հավանաբար այս «հետեւանքները» ներքին եւ արտաքին խարդավանքների հավանականությունը հաշվի առնելով կառավարությունը

տեղի տվեց մեր «ապագա հանճարների» առաջ: Հայկական բանակում ծառայել չցանկացող (ուսանողության «փորացավը» սա էր) ուսանողությունը եւ «դասալիքներին» ամեն կերպ աջակցող մեր հայրենասեր ընդդիմությունը վերջին օրերին հեռուստաէկրաններից եւ հրապարակավ ուղղակիորեն վարկաբեկում էին հայկական բանակը՝ երրորդ հանրապետության ամենալուրջ ձեռքբերումը: Նախօրեին պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին սուլոցներով ընդունող ուսանողները հարցնում էին՝ ինչո՞ւ պետք է գիտնականը ծառայի բանակում, ոչ թե գիտությամբ զբաղվի: Նախարարի պատասխանը տրամաբանական էր եւ արդարացված՝ այդ դեպքում ինչո՞ւ պետք է նկարիչը ծառայի բանակում, չէ՞ որ չի կարելի նկարչությունն ընդհատել, ինչո՞ւ պետք է երաժիշտը, մանկավարժը ծառայեն բանակում, չէ՞ որ նրանց աշխատանքն էլ չի կարելի կիսաս թողնել, բայց այդ դեպքում ո՞վ է այս երկիրը պահելու:

«Զինապարտության մասին» օրենքն ԱԺ-ից հետ կանչվեց ճիշտ ժամանակին, գուցե մի քանի օր ուշացումով: Խնդիրը բոլորովին էլ այն չէ՝ նախագիծը վատն էր կամ թերի: Պարզապես «դասալիք» ուսանողության բողոքը կարող էր պատճառ դառնալ ներքաղաքական լուրջ ցնցումների: Մանավանդ որ ուսանողությանը պաշտպանող Շավարշ Քոչարյանը, Արամ Սարգսյանը, մյուս ընդդիմադիր գործիչներն ու կուսակցությունները, միջակության սահմանը չհասող եւ մարտնչող որոշ հայ մտավորականներ պատրաստ էին «դասալիքներից» վերցնել էսաֆետը: Այժմ, երբ արդեն օրենքի նախագիծն այլեւս շրջանառության մեջ չէ, ընդդիմությունը զրկվեց այն իր քաղաքական շահերին ծառայեցնելու հնարավորությունից:

Մյուս կողմից՝ ժողովրդի վստահությունը չվայելող իշխանությունները ընդդիմության համար ստեղծեցին նախադեպ: այսուհետեւ նմանօրինակ, ժողովրդի որոշ շրջանակի անմիջական շահերին առնչվող օրինագծերը թերեւս արժանանան նույն ճակատագրին: Ընդդիմությունը, որ իշխանություններից իր գործելակերպով եւ ժողովրդին տված ծառայություններով չի տարբերվում եւ որոշ դեպքերում ավելի անտանելի է, քան իշխանությունը, դեմ է դուրս գալու օրենքի նախագծերին՝ դրանք համարելով հայ ժողովրդի շահերին հակասող:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՈՒՅԺ

Մանվել վարդապետ Երկաթյան

Թուրքական իշխանության գոհ եկեղեցականը մահացավ 50 տարեկանում

Գերմանիայի այն ժամանակվա կանցլեր Հելմուտ Քոլը նախագահ Թուրգութ Օզալին խնդրել էր նրան ազատել բանտից: Երկաթյան վարդապետը թուրքական բանտից ազատվել էր 1986 թ.:

Հակառակ քայքայված առողջությանը եւ կրած հոգեկան տառապանքներին, Հայր սուրբը շարունակում էր ծառայել իր ժողովրդին ու եկեղեցուն: Հերթական բուժումների համար հունվարին գնացել է Մ. Նահանգներ, ուր եւ վախճանվել փետրվարի 11-ին:

Առաջիկայում **«Ազգը»** կանդրադառնա թուրքական հակահայ քաղաքականության գոհ հայ եկեղեցականի բանտային օրերի հիշողությանը:

Մեծ ուշացումով տեղեկացանք, որ ընդամենը 50 տարեկանում մահացել է Հոլանդիայում հայ եկեղեցու հոգեւոր հովիվ Մանվել վարդապետ Երկաթյանը, թուրքական բանտերում 1980-86 թթ., գրեթե 7 տարի ամենօրյա կչտանքների, ֆիզիկական ու հոգեկան տառապանքների հետեւանքով ստացած վերքերի ու հիվանդությունների հետեւանքով:

Հանգուցյալ Հայր սուրբը ծնվել է 1954 թ. Ստամբուլում: 14 տարեկանում տարվել է Երուսաղեմ՝ Սրբոց Հակոբյանց վանքում ուսանելու: 10 տարի սովորելուց հետո գինվորական ծառայության համար 2 տարով վերադարձել էր Թուրքիա: Ծառայության ավարտին վարդապետ էր ձեռնադրվել եւ ավելի ուշ ստանձնել Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի տեսչության պաշտոնը: 1980 թ. հոկտեմբերին Թուրքիա էր գնացել ժառանգավորաց վարժարանի համար աշակերտներ հավաքագրելու: Ստամբուլի օդանավակայանում ձերբակալվել էր հայկական ազգային եւ ահաբեկչական փաստաթղթեր ու թերթեր ունենալու կեղծ պատրվակով եւ տանջալից հարցաքննություններից ավարտին դատապարտվել 9 տարվա ազատազրկման: Բանտում գրեթե ամեն օր ենթարկվել էր հրահանգավորված բանտապահների ծեծ ու տանջանքներին: «Միջազգային ներում» եւ այլ կազմակերպությունների միջամտություններն անօգուտ էին մնացել, մինչեւ որ Գերմանիայի այն ժամանակվա կանցլեր Հելմուտ Քոլը նախագահ Թուրգութ Օզալին խնդրել էր նրան ազատել բանտից: Երկաթյան վարդապետը թուրքական բանտից ազատվել էր 1986 թ.:

Հակառակ քայքայված առողջությանը եւ կրած հոգեկան տառապանքներին, Հայր սուրբը շարունակում էր ծառայել իր ժողովրդին ու եկեղեցուն: Հերթական բուժումների համար հունվարին գնացել է Մ. Նահանգներ, ուր եւ վախճանվել փետրվարի 11-ին:

Առաջիկայում **«Ազգը»** կանդրադառնա թուրքական հակահայ քաղաքականության գոհ հայ եկեղեցականի բանտային օրերի հիշողությանը:

Փետրվարի դասերն ու խորհուրդը

Սկիզբը էջ 1

Այսօր քչերն են հիշում փետրվարի 22-ը, երբ բազմահազար զինված ադրբեջանցիներ հարձակվեցին խաղաղ Ասկերան ավանի վրա: Ըստ էության, դա Սումգայիթի նախերգանքն էր, որը կասեցվեց միայն ասկերանցիների ու նրանց օգնության եկած ստեփանակերտցիների համատեղ ուժերով: Այդ օրն առաջին անգամ ուղիղ նշանառությամբ հրացան կրակեց, եղան զոհեր հարձակվողների կողմից: Եթե դա տեղի չունենար, անխուսափելի կլիներ եղեռնը, եւ գուցե թե դրանով իսկ խեղդվեր ղարաբաղյան շարժումը, ինչը ոչ միայն Ադրբեջանի, այլեւ պաշտոնական Մոսկվայի գաղտնի մտադրությունն էր: Դրա մասին կարելի է վստահաբար ասել, որովհետեւ ասկերանյան առճակատման օրը քաղաքյուրոյի երկու անդամներ գտնվում էին Ստեփանակերտում եւ հրապարակում հավաքված ժողովրդի առաջ կանգնած՝ լկտիաբար հերքում էին նույն այդ պահին Ասկերանում տեղի ունեցող բախումները:

Ասկերանում ադրբեջանցին ջարդ կրեց, սակայն դրանով ավելի գազազեց: Փետրվարի 26-ին, Ղարաբաղից հարյուրավոր կիլոմետրեր հեռու, սկսվեց սումգայիթյան եղեռնը: Այն ծավալուն դարձավ հաջորդ օրը եւ տեւեց երեք օր, որի ընթացքում ո՛չ տեղական իրավապահները, ո՛չ էլ այդ նպատակով Սումգայիթ բերված խորհրդային ներքին զորքերը չմիջամտեցին, չփորձեցին մարել ազգամիջյան մեծ հրդեհի բոցը: Եվ դա յուրօրինակ խրախուսանք էր արյունռուչ ելուզակներին: Այդպես է, որովհետեւ դրանից հետո կենտրոնական հեռուստատեսությամբ հանդես գալով, միութենական դատախազության ներկայացուցիչ Կատուսեւը, որը եղեռնի օրերին գործուղվել էր Սումգայիթ, առանց ամոթի նշույլի աղավաղելով այնտեղ տեղի ունեցածի իսկությունը, հերքեց անմեղ հայերի կոտորածը: Այսօր էլ սումգայիթյան ոճիրն իր նորոյա դրսեւորումներն ունի. Բուդապեշտում հայ սպայի դավադիր սպանությունը ոչ այլ ինչ է, քան վայրենի բնազդի վերարթնացում ադրբեջանական գենի մեջ, ինչը պետք է արժանի գնահատական սպանա միջազգային հանրության կողմից:

1992-ի փետրվարի 26-ին հայ զորականները ոչնչացրին Խոջալուում տեղակայված կրակակետը: Այս իրադարձությունն ադրբեջանցիները նույնպես աղավաղված են ներկայացնում՝ իրենց պատմության մեջ սեւ օր արձանագրելով Խոջալուն: Եթե դա իրոք ադրբեջանցիների համար սեւ է, ապա լոկ այն իմաստով, որ փոքրաթիվ ղարաբաղյան ջոկատը կարողացավ ոչնչացնել հսկայական հիդրային, նրան, որն ամիսներ շարունակ ամրոցի մեջ էր պահում շրջակա հայկական բնակավայրերը, այդ թվում՝ Ստեփանակերտը: Ամեն օր հարյուրավոր արկեր ու հրթիռներ էին արձակվում Ասկերանի, Նորագյուղի, Մեհտիշենի, Բալուջայի, Խանածախի ու Ստեփանակերտի վրա՝ ավերածությունների ենթարկելով բնակավայրերն ու զոհեր պատճառելով խաղաղ բնակչությանը: Երբեւէ ադրբեջանական քարոզչությունը փորձ արե՞լ է արձանագրելու այս փաստը, նշե՞լ է, որ ընդամենը երեք տարվա ընթացքում Խոջալու գյուղի բնակչությունը եռապատկվել է: Կարելի է մտածել, թե ադրբեջանական էքսոսի վերարտադրությունը գինեսյան ներուկություն ունի՞: Բնավ, Խոջալուի ծավալային աճը տեղի է ունեցել միայն գերվերաբնակեցման հաշվին, այն վերաբնակիչների, որոնք բահի ու քլունգի փոխարեն իրենց հետ բերել էին հրազեն ու ռազմամթերք: Եթե խոսվում է «Խոջալուի ողբերգության» մասին, ապա այսօրվա Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը պետք է նկատի ունենա նաեւ վերոհիշյալ փաստը:

1994-ի փետրվարին եղավ Օմարի լեռնանցքի հաղթական ճակատամարտը: Ադրբեջանական բանակի սուր ատամները ջարդվեցին Մռավ սարի լանջերին: Սա էլ յուրօրինակ դաս է, եւ եթե մեր հարեւաններն իրոք դրանից ինչ-որ դաս քաղել են, ապա դրա անմիջական արդյունքը, թերեւս, ամիսներ հետո իրենց իսկ խնդրանքով հաստատված հրադադարն է, որը շարունակվում է մինչեւ այսօր:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 69 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Հաս. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Մայրաքաղաքում շուրջօրյա ջրամատակարարում՝ 2005 թվականին

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ գործադիր տնօրեն Անդրանիկ Հովհաննիսյանի հավաստմամբ, մայրաքաղաքն ամբողջությամբ շուրջօրյա ջրամատակարարման կանցնի 2005 թվականին: Այս պահին մայրաքաղաքի բաժանորդների միայն 45 տոկոսն է ապահովված 24-ժամյա ջրամատակարարմամբ: 2004 թվականի հոկտեմբերի 1-ից այդ հարաբերությունը կկազմի 80 տոկոս: Շուրջօրյա խմելու ջուր չեն ունենա միայն Զեյթուն եւ Սարի թաղ հասցեները: Այդ թաղամասերի համար նոր կարգավորիչ ջրամբարներ են կառուցվում: Եվ միայն 2005 թվականին բնակչության մնացած 20 տոկոսն էլ կապահովվի շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Ի դեպ, Երեւանի 297 հազար բաժանորդներից միայն 250 հազարի հետ են պայմանագրեր կնքվել: Ուսումնասիրությունները պարզել են, որ 52 հազար բաժանորդներ երկար ժամանակ ապօրինի, առանց գրանցման ջուր են օգտագործել: Նույն սկզբունքով միայն անցած տարում ջուր են օգտագործել 2000 կազմակերպություններ: Նույնիսկ այսպիսի փաստերի առկայությամբ ջրաչափերի տեղադրումից հետո վարձավճարների գանձումը բազմապատիկ ավելացել է: Մեկ տարի առաջ 297 հազար բաժանորդներից միայն 6 հազարն էր վճարումներ անում, այսօր այդ թիվը հասել է 230 հազարի:

Այնուամենայնիվ, գործադիր տնօրենը նշեց, որ այդ վճարումներն ի վիճակի չեն լուծելու խնդիրների այն բեռը, որ կուտակվել է այս ասպարեզում:

Այսօր հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովը ենթարկելու է ջրի սակագնի բարձրացման հարցը: Ամենայն հավանականությամբ, ջրի արժեքը կբարձրանա: Սակայն նկատենք, որ սա էլ համակարգի փրկության երաշխիք լինել չի կարող: Համակարգի հիմնանորոգման համար, ինչի հետեւանքով Երեւանում ամեն ամիս 800-ից ավելի վթարներ են գրանցվում, հարյուրավոր միլիոնների դոլարներ են պետք տարբեր հաշվարկներով՝ 700 մլն-ից մինչեւ 2 մլրդ դոլար:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Շիրակում շուրջօրյա ջրամատակարարման ծրագիր

Հասկանալի է 88-ի երկրաշարժից հետո Գյումրիում եւ Շիրակի մարզի այլ բնակավայրերում խմելու ջրի կորուստները հասնում են մինչեւ 60 տոկոսի: Դա պայմանավորված է ջրատար ցանցերի խիստ մաշվածությամբ ու քայքայվածությամբ, որին ավելացել են նաեւ աղետի պատճառած ավերածությունները: Այս վիճակում գտնվող եւ վաղուց հիմնական նորոգման չենթարկված ցանցերի շահագործումը ոչ միայն խնդրաբաց է, այլեւ անվտանգ չէ բնակչության համար, ինչի վկայությունը օգտագործած ջրի պատճառով փետրվարի սկզբներին դիզենտերիայի բռնկումն էր Գյումրու Նորավան թաղամասում:

ՀՀ կառավարության մասնակցությամբ, Գերմանիայի եւ Համաշխարհային բանկի տրամադրած վարկային գումարների օգնությամբ ապրիլ ամսվա սկզբից Շիրակի մարզում կսկսի իրականացվել ջրատար մայրուղիների եւ մյուս ցանցերի հիմնանորոգման ծավալուն ծրագիր: Ընդսմին շահագրգիռ համայնքները իրենց մասնակցությունը պետք է ունենան ծրագրի իրականացմանը: Այն սկզբում կընդգրկի Գյումրի քաղաքն ու հարակից հինգ թվով բնակավայրեր, իսկ հետագայում նաեւ այլ համայնքներ: Ոլորտի պատասխանատուների վկայությամբ, ծրագրի հաջող իրագործման դեպքում ամենամոտ ապագայում Գյումրին, իսկ 2-3 տարի հետո ամբողջ Շիրակի մարզը կապահովվի շուրջօրյա ջրամատակարարմամբ: Դրանով նաեւ կբարելավվի խմելու ջրի որակը, էականորեն կնվազի ջրի պատճառով հիվանդությունների առաջացման վտանգը:

Վարկային ծրագրի շրջանակներում, կառավարության 51 տոկոս բաժնեմասով ստեղծվում է «Շիրակջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերություն, որը պետք է համակարգի Գյումրու եւ այլ համայնքների ջրամատակարարումն ու ջրահեռացումը:

Գ. Մ.

Չի բացառվում, որ Գյումրիում աղիքային վարակի բռնկումների պատճառը եւս խմելու ջրի աղտոտումն էր

Գյումրու Նորավան թաղամասում 2,5 շաբաթ առաջ բռնկված աղիքային վարակների պատճառով ինֆեկցիոն հիվանդանոց տեղափոխված հիվանդների թիվն անցավ 3 տասնյակից, մեծ մասը մինչեւ 14 տարեկան երեխաներ էին: Ընդ որում, վարակի դեպքեր գրանցվեցին նաեւ Գյումրու այլ թաղամասերում:

ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության պետի տեղակալ Ղ. Հակոբյանի ստորագրությամբ հաղորդագրության համաձայն, «հիվանդացության տեղային բնույթը (Նորավան թաղամաս), հիվանդության թեթեւ ընթացքի եւ դեպքերի միաժամանակյա արձանագրման փաստերը չեն բացառում բռնկման ջրային բնույթը: Չի բացառվում ձնահալոցքային ջրերի ներթափանցումը խմելու ջրի մեջ՝ ինչպես ջրմուղների գլխամասային կառույց, այնպես էլ ջրամատակարարման ներքին ցանց»: Ջրի գերքլորացումից հետո վարակի նոր դեպքեր չեն արձանագրվել:

Համենայն դեպս, հիվանդության բռնկման օջախում շարունակվում են սանիտարա-հիգիենիկ եւ հակահամաճարակային ուժեղացված միջոցառումներ:

Նկատենք, որ թե տեղացի, թե արտասահմանյան փորձագետների համոզմամբ, 1988 թվականի մեծ երկրաշարժից հետո հատկապես աղետի գոտու ջրմուղ-կոյուղու համակարգը կասկածելի վիճակում հայտնվեց: Ոչ ոք չգիտի, թե գետնի տակ ինչ կատարվեց եւ ինչ է կատարվում այսօր ջրմուղ-կոյուղու ջրագծերի ու խողովակաշարերի հետ: Առավել եւս, որ դրանք հանրապետության մյուս տարածքների համակարգերի նման արդեն 4 տասնամյակ որեւէ նորոգման չեն ենթարկվել: Ցավալի ճշմարտություն է, որ այսօրինակ վթարների կրկնության հավանականությունը մեծ է, եւ ամենից առաջ՝ աղետի գոտում:

Կ. Դ.

Բացահայտվեց եւս մեկ դեպք

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության օպերատիվ տեղեկագրից ներկայացնում ենք, որ փետրվարի 2-ին ոստիկանության կենտրոնական բաժին հիվանդանոցից հաղորդվել էր, որ իր բնակարանից գանգուղեղային վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել Ս. Գ.-ն: Ջեռնարկված օպերատիվ հետախուզական եւ քննչական միջոցառումների շնորհիվ մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման է ենթարկվել Սամվել Ս.-ն: Պարզվել է, որ փետրվարի 1-ին օղակածեւ գբոսայգում վերջինս ծեծի է ենթարկել Ս. Գ.-ին: Սամվել Ս.-ն ստորագրությամբ բաց է թողնվել, կասկածվում է նախաքննություն:

Լուսանկարը
ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆԻ

Հասարակական կազմակերպությունները ընդունեցին նորմերի կոդեքս

Հանրապետության 15 հասարակական կազմակերպություններ մշակել են իրենց գործունեության նորմերի կոդեքս: Ըստ աշխատանքային խմբի անդամ Նարեկ Զեյնալյանի, սա միայն բարոյական փաստաթուղթ է, ոչ մի կազմակերպություն պարտավոր չէ հետեւել այստեղ գրված նորմերին, սակայն քանի որ արտասահմանում նման փաստաթղթերն ուշադրության են արժանանում, պետք է ենթադրել, որ ոլորտում մրցակցությունից դուրս չմնալու համար անհրաժեշտ է հետեւել այս նորմերին:

Կոդեքսի կազմման աշխատանքները համակարգել, կենտրոնացրել է Համաշխարհային ուսուցման ծրագիրը: Կոդեքսը սահմանում է հասարակական կազմակերպության մեջ մարդկային ռեսուրսների բաշխումը, ֆինանսական միջոցների հայթայթումը, կազմակերպության թափանցիկությունը, համագործակցությունն այլ կազմակերպությունների հետ:

Կոդեքսի շնորհանդեսին ներկա էր նաեւ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Օդոուելը, որն իր խոսքում մասնավորապես ասաց. «Որպեսզի քաղաքացիական հասարակության օղակների նկատմամբ մեծ վստահություն լինի, անհրաժեշտ է, որ վերջիններս համախմբված գործունեություն ծավալեն: Այս կոդեքսը հասարակական կազմակերպություններին դրա հնարավորությունն է ընձեռում»:

Ներկաները նշեցին, որ կոդեքսը անփոփոխ չի մնա, հասարակական տարբեր կազմակերպությունների առաջարկներով ժամանակի ընթացքում կարող է փոփոխություններ կրել:

Թ. Մ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Առեւտուրը կկանոնակարգվի եւ կդասակարգվի

Իսկ աշխատանքի ընդունվելիս կպահանջվի մասնագիտացում

Առեւտրի եւ ստանդարտացման ոլորտներին էին առնչվում կառավարության երեկ հաստատած օրենքների նախագծերը, որոնք լրագրողներին ներկայացրեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարեն Ճշմարիտյանը: Ըստ նախարարի, ներկայումս առեւտուրը եւ հանրային սննդի բնագավառը կանոնակարգում են տարբեր ծառայություններ: «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքի ընդունմամբ այս ոլորտը կկարգավորվի մեկ օրենքով: Սա փաստաթղթի ընդունման առաջին կարեւոր նպատակն է, իսկ երկրորդը այս ոլորտում առավել քաղաքակիրթ մեթոդների ներդրումն է: Օրենքը նախատեսում է դասակարգել առեւտրի ոլորտները՝ շուկաները, առեւտրի իրականացման վայրերը, տոնավաճառները, կրպակները, հանրային սննդի օբյեկտները, մեծածախ առեւտուրը եւ այլն: Առեւտուրը պետք է ապակենտրոնացվի եւ դրա կանոնակարգումը, բացի որակի հարցերից, ասենք՝ ճանաչելի պետք է անցնի տեղական ինքնակառավարման մարմիններին:

Կարեն Ճշմարիտյանը հայտնեց, որ մինչեւ 2005 թ. հանրային սննդի եւ առեւտրի ոլորտներում աշխատանքի ընդունվելու համար պահանջվելու է համապատասխան մասնագիտական կրթություն: Դա նախարարը բացատրեց սպառողների առողջությունը եւ սննդի անվտանգությունն ապահովելու նկատառումներով, տեղեկացնելով նաեւ, որ այս ոլորտում է ընդգրկված Հայաստանի զբաղվածների ընդհանուր թվի 30 տոկոսը:

Ինչ վերաբերում է ստանդարտներին, ապա այստեղ կատարվելիք օրենքների փոփոխություններով նախատեսվում է սննդի հետ կապված տեխնիկական կանոնների պարտադիր սերտիֆիկացում, ինչն Առեւտրի համաշխարհային կազմակերպության պահանջներից է: Հաջորդը սերտիֆիկացման մարմինների, լաբորատորիաների ստեղծումն է, որը հիմք պետք է դառնա ծառայությունների որոշակի որակի ապահովման համար:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մշակութային արժեքների արտահանումն ու ներմուծումը կազատականացվեն

«Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին» նոր օրենքը կազատականացնի այս ոլորտը: Կառավարության երեկ հաստատած այս փաստաթղթում կկանոնակարգվեն կերպարվեստի եւ դեկորատիվ կիրառական արվեստի ստեղծագործությունների արտահանման վկայականի, վճարվող տուրքերի խնդիրները: Ինչպես տեղեկացրեց մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Թամար Պողոսյանը, մինչեւ 75 տարի վաղեմություն ունեցող վերոնշյալ ստեղծագործությունները կարտահանվեն առանց արտահանման վկայագրի: Նախկինում 50 տարվա վաղեմության մշակութային արժեքների արտահանման դեպքում վճարվում էր տուրք գնահատված արժեքի 5 տոկոսի չափով, իսկ դրանից բարձր՝ 15 տոկոսի չափով: Այսուհետեւ մինչեւ 50 տարվա ստեղծագործությունները կարտահանվեն առանց վճարի, իսկ դրանից ավելի տարիքի դեպքում կվճարվի հաստատագրված վճար:

Մյուս կողմից, ինչպես տեղեկացրեց նախարարը, մշակութային արժեքների ներմուծումը կազատվի 20 ավելացված արժեքի հարկից եւ 10 տոկոս մաքսատուրքից: Թամար Պողոսյանը թվարկեց 50 եւ 75 տարվա վաղեմության այն առարկաների անվանումները, որոնք կարտահանվեն առանց արտահանման վկայականի: Դրանք են (50 տարվա վաղեմության) գեղանկարչական, գրաֆիկական, քանդակագործական ստեղծագործություններ, դիզայն, ինստալացիա, կոլաժ, գեղանկարչական լուսանկարչություն, դեկորատիվ կոմպոզիցիաներ, ինչպես նաեւ (75 տարվա վաղեմության) պետական պարգեւներ, ծիսապատանեկային իրեր, կրոնական գրականություն, հուշանվերներ, հուշանվեր զենքեր, կարի մեքենաներ, հոբելյանական դրամներ եւ այլն:

Նախարարը տեղեկացրեց նաեւ, որ «Վերնիսաժից» գնված պորտֆոլիոները կընդգրկվեն առանց վկայագրի արտահանվող պորտֆոլիոների ցանկում:

Ա. Մ.

HSBC-ն երկարաձգում է վարկավորման ժամկետները եւ իջեցնում տոկոսադրույքները

Երեկ «HSBC բանկ Հայաստանի» գլխավոր գործադիր տնօրեն Նիգել Գիլմորը՝ լրագրողների հետ հանդիպման նպատակը բանկի որոշ ծառայությունների տրամադրման պայմաններում եւ սակագներում համապատասխանաբար մարտի 1-ից եւ ապրիլի 1-ից ուժի մեջ մտնող փոփոխություններին ծանոթացնելն էր:

Մասնավորապես բնակարան գնելու նպատակով հիպոթեկային վարկավորման ժամկետը 4 տարուց դարձել է 7 տարի, վարկավորման տոկոսը 15-ից իջեցվել է 11 տոկոսի: Ըստ բանկի ղեկավարի, այս ժամկետները կերկարաձգվեն եւ տոկոսները կիջնեն Կենտրոնական բանկի մշակած հիպոթեկային վարկավորման օրենսդրական փաթեթի ընդունումից հետո: Բանկն այժմ կտրամադրի պահանջվող գումարի 75 տոկոսը նախկին 50 տոկոսի փոխարեն: Դա պետք է կազմի վարկառուի եկամտի մինչեւ 33-ապատիկը ներկայիս 16-ապատիկի փոխարեն: Բանկի փոխտնօրեն Արարատ Ղուկասյանը հետեւյալ կերպ պարզաբանեց այս հարցը՝ եթե վարկառուն ունի ենթադրենք ամսական 1000 դոլարի կայուն եկամուտ, ապա բանկը վարկը կտրամադրի մինչեւ 33 հազար դոլարի չափով: Նա նաեւ տեղեկացրեց, որ մինչ այժմ տված 80 հիպոթեկային վարկերի մեծ մասը վերադարձվել է ժամկետից շուտ:

Հաջորդը ավտոմեքենաների գնման հետ կապված սպառողական վարկերի տրամադրման նոր պայմաններն էին: Նիգել Գիլմորը հայտնեց, որ վարկավորման ժամկետը 2 տարուց երկարաձգվել է եւ դարձել 3 տարի, իսկ տվող գումարը կկազմի վարկառուի եկամտի 16-ապատիկը ներկայիս 8-ապատիկի փոխարեն:

Ինչ վերաբերում է HSBC բանկ Հայաստանի 2003 թ. տարեկան ցուցանիշներին, ապա բոլոր առումներով դրանք առաջընթաց են արձանագրել: Մասնավորապես իրավաբանական անձանց տվող վարկերի ծավալն ավելացել է 60 տոկոսով, ֆիզիկական անձանց տվող վարկերինը՝ 359 տոկոսով: Եվ վերջապես, անցյալ տարի բանկի շահույթը կազմել է 3,6 մլն դոլար:

Ա. Մ.

Ազգային

Փետրվարի 19-ին Բուդապեստում ադրբեջանցի Ռամիլ Սաֆարովը դաժանաբար սպանեց հայ լեյտենանտ Գուրգեն Մարգարյանին: Սպանությունը կատարվեց Հունգարիայի ազգային պաշտպանության համալսարանում, որտեղ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» շրջանակներում անցկացվող դասընթացներին այլ երկրների թվում մասնակցում էին նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները: Այլ կերպ՝ հայ սպայի անվտանգության համար պատասխանատվություն էին կրում ՆԱՏՕ-ն, ծրագրին մասնակից երկրները, առավել եւս դասընթացների կազմակերպիչ Հունգարիայի պաշտպանության նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը նմանապես:

Պատասխանատվությունն արձագանք էր գոնե ենթադրում: Հունգարիայի պաշտպանության նախարարությունը խուսափեց արձագանքելուց: Ավելին՝ խուսափողական այս մոտեցումն արդարացրեց նախարարության խոսնակ Պիտեր Մակյուսը, հայտարարելով. «Կառավարությունը եւ նախարարությունը չեն ցանկանում քաղաքական շարժառիթ տեսնել այս սպանության մեջ: Սա պարզապես հանցագործություն է, եւ հուսով եմ, որ ոստիկանությունը կպարզի»: Արդարացման հարցում խոսնակին հետեւեց Ավստրիայում ՀՀ դեսպան Ջիվան Թաբիբյանը, թե «այժմ սպասում ենք Հունգարիայի ոստիկանության հաղորդագրությանը»:

Մինչ Թաբիբյանը Մակյուսի օրինակով հաղորդագրությանն էր սպասում, ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարեց. «Հուսով եմ, որ միջազգային հանրությունը համապատասխան եզրակացություն կանի եւ արժանի գնահատական կտա»: Համանման մոտեցում ցուցաբերեց նաեւ ՀՀ արտգործնախարարությունն այն տարբերությամբ, որ վերջինն ակնկալում էր միջազգային կազմակերպությունների արձագանքը կատարվածին համարժեք գնահատականով հանդերձ:

Միջազգային հանրությունը եւ կազմակերպություններն առ այսօր չեն արձագանքել: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարն է ընդամենը բանավոր դատապարտել ոճիրը՝ չմոռանալով իր անկեղծ ցավակցությունը: Ինչ վերաբերում է գնահատականին, ապա որքան էլ ՀՀ պաշտպանության փոխնախարար, գեներալ-գնդապետ Միխայել Հարությունյանը հավաստիացնի ՆԱՏՕ-ի ղեկավարության մոտալուտ արձագանքի մասին, ըստ երեւույթին հայկական իշխանությունները դա իրատեսական չեն համարում, որ հայ զինծառայողներ ունենար, սպանության գնահատականի հարցում նախ վճռական պետք է լիներ ՀՀ պաշտպանության նախարարությունը: Նրա հաղորդագրությանը պետք է հետեւեին գործնական քայլեր՝ անհապաղ Բուդապեշտից հետ կանչվեր Հունգարիայի ազգային պաշտպանության համալսարանում անցկացվող դասընթացներին մասնակից երկրորդ հայ սպան, մանավանդ որ ադրբեջանցի մարդասպանը նրան եւս սպանելու փորձ էր արել, եւ պաշտոնապես հայտարարվեր, որ մինչեւ սպանության գնահատականը սառեցվում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին Հայաստանի մասնակցությունը:

Չպետք է մոռանալ, որ այդ ծրագիրը նախ եւ առաջ բխում է ՆԱՏՕ-ի շահերից, ուրեմն դրան Հայաստանի մասնակցությամբ շահագրգիռ են ինչպես Հյուսիսատլանտյան դաշինքի երկրները, այնպես էլ վերոհիշյալ միջազգային կառույցները: Թերեւս այդ շահերն ու շահագրգռությունները կստիպեին ՆԱՏՕ-ին, միջազգային հանրությանն ու կառույցներին անհապաղ դատապարտել ադրբեջանցի չարաճակ մարդասպանին, արձագանքել սպանությանը եւ տալ կատարվածի գնահատականը:

Այս դեպքում ոչ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը կհամարձակվեր լկտիաբար արդարացնել սպանությունը, ոչ Ադրբեջանի արտգործնախարարությունը պատշաճաբար կպատասխաներ ադրբեջանցի մարդասպանին, ոչ էլ Եվրախորհրդում Ադրբեջանի դեսպան Մահիր Մեհտիեւը եվրոպացի խորհրդականների առջեւ ադրբեջանցի մարդասպանին կհերոսացներ՝ հայտարարելով. «Քանի դեռ Ղարաբաղի հարցը չի լուծվել, հայերը հանգիստ քուն չեն ունենալու»: Նույնիսկ Հունգարիայի պաշտպանության նախարարության մամլո խոսնակ Մակյուսը կարող էր ներողություն խնդրել քաղաքական բնույթի սպանությունը սովորական հանցագործության վերածելու նկրտումների համար:

ՎԱՀԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

Քանի դեռ հայկական իշխանությունները վճռական չեն

Միջազգային կառույցները գնահատական չեն տա հայ սպայի սպանությանը

մասնակից երկրները, առավել եւս դասընթացների կազմակերպիչ Հունգարիայի պաշտպանության նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը նմանապես:

Պատասխանատվությունն արձագանք էր գոնե ենթադրում: Հունգարիայի պաշտպանության նախարարությունը խուսափեց արձագանքելուց: Ավելին՝ խուսափողական այս մոտեցումն արդարացրեց նախարարության խոսնակ Պիտեր Մակյուսը, հայտարարելով. «Կառավարությունը եւ նախարարությունը չեն ցանկանում քաղաքական շարժառիթ տեսնել այս սպանության մեջ: Սա պարզապես հանցագործություն է, եւ հուսով եմ, որ ոստիկանությունը կպարզի»: Արդարացման հարցում խոսնակին հետեւեց Ավստրիայում ՀՀ դեսպան Ջիվան Թաբիբյանը, թե «այժմ սպասում ենք Հունգարիայի ոստիկանության հաղորդագրությանը»:

Մինչ Թաբիբյանը Մակյուսի օրինակով հաղորդագրությանն էր սպասում, ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարեց. «Հուսով եմ, որ միջազգային հանրությունը համապատասխան եզրակացություն կանի եւ արժանի գնահատական կտա»: Համանման մոտեցում ցուցաբերեց նաեւ ՀՀ արտգործնախարարությունն այն տարբերությամբ, որ վերջինն ակնկալում էր միջազգային կազմակերպությունների արձագանքը կատարվածին համարժեք գնահատականներ ունենալու անվտանգության արտահայտման միջոցներ են ձեռնարկել:

Թե ինչ միջոցներ են, հայտնի չէ: Պարզապես դրանց ձեռնարկումը նշանակում է ոչ միայն համակերպվել միջազգային հանրության եւ կառույցների անտարբերության հետ, այլեւ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրից անմասն չմնալու մղումով ՆԱՏՕ-ին ծերբազատել ծրագրի շրջանակներում անցկացվող միջոցառումների մասնակից հայ զինծառայողների անվտանգությունն ապահովելու, հակառակ դեպքում գոնե կատարվածի գնահատականը տալու տաճ պարտականությունից:

Ինչպե՞ս կարելի է գնահատական ակնկալել ՆԱՏՕ-ից կամ միջազգային կառույցներից, երբ վերջիններս արձագանքից զարուսկում են հրաժարվել, իսկ ՀՀ պաշտպանության փոխնախարար Հարությունյանն այդ կառույցներին փետրվարի 24-ի հայտարարությամբ հավաստիացնում է. «Հայաստանը չի հրաժարվի «Լավագույն ջանք-2004» զորավարժություններին մասնակցելուց, որը տեղի է ունենալու Ադրբեջանում»:

Թվում է, թե այս հայտարարությամբ ՆԱՏՕ-ն զորավարժությունները Բաքվում չանցկացնելու պատճառ այլեւս չի ունենում: Սպասել, որ այս պայմաններում սպանությանը գնահատական տրվի, իրատեսական չէ: Որպեսզի դա տեղի ունենար, սպանության գնահատականի հարցում նախ վճռական պետք է լիներ ՀՀ պաշտպանության նախարարությունը: Նրա հաղորդագրությանը պետք է հետեւեին գործնական քայլեր՝ անհապաղ Բուդապեշտից հետ կանչվեր Հունգարիայի ազգային պաշտպանության համալսարանում անցկացվող դասընթացներին մասնակից երկրորդ հայ սպան, մանավանդ որ ադրբեջանցի մարդասպանը նրան եւս սպանելու փորձ էր արել, եւ պաշտոնապես հայտարարվեր, որ մինչեւ սպանության գնահատականը սառեցվում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին Հայաստանի մասնակցությունը:

Չպետք է մոռանալ, որ այդ ծրագիրը նախ եւ առաջ բխում է ՆԱՏՕ-ի շահերից, ուրեմն դրան Հայաստանի մասնակցությամբ շահագրգիռ են ինչպես Հյուսիսատլանտյան դաշինքի երկրները, այնպես էլ վերոհիշյալ միջազգային կառույցները: Թերեւս այդ շահերն ու շահագրգռությունները կստիպեին ՆԱՏՕ-ին, միջազգային հանրությանն ու կառույցներին անհապաղ դատապարտել ադրբեջանցի չարաճակ մարդասպանին, արձագանքել սպանությանը եւ տալ կատարվածի գնահատականը:

Այս դեպքում ոչ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը կհամարձակվեր լկտիաբար արդարացնել սպանությունը, ոչ Ադրբեջանի արտգործնախարարությունը պատշաճաբար կպատասխաներ ադրբեջանցի մարդասպանին, ոչ էլ Եվրախորհրդում Ադրբեջանի դեսպան Մահիր Մեհտիեւը եվրոպացի խորհրդականների առջեւ ադրբեջանցի մարդասպանին կհերոսացներ՝ հայտարարելով. «Քանի դեռ Ղարաբաղի հարցը չի լուծվել, հայերը հանգիստ քուն չեն ունենալու»: Նույնիսկ Հունգարիայի պաշտպանության նախարարության մամլո խոսնակ Մակյուսը կարող էր ներողություն խնդրել քաղաքական բնույթի սպանությունը սովորական հանցագործության վերածելու նկրտումների համար:

ՎԱՀԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Ղարաբաղը երբեք չի կարող կառավարվել Ադրբեջանի կողմից

ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Բուդապեշտում (Հունգարիա) գտնվող հայ սպայի սահմռկեցուցիչ սպանությունը ադրբեջանցի սպայի կողմից մի անգամ եւս հաստատում է այն փաստը, որ Ղարաբաղն այլեւս երբեք չի կարող կառավարվել Ադրբեջանի կողմից:

Քսաներորդ դարի մեծ մասի ընթացքում Ղարաբաղի հայերը մշտական հետապնդումների եւ պարբերական կոտորածների են ենթարկվել Ադրբեջանում, մինչեւ, ի վերջո 80-ականների վերջերին նրանք ապստամբեցին եւ անկախություն հռչակեցին:

Հարցն այն է, սակայն, որ արեւմտյան երկրներից շատերը, Միացյալ Նահանգների առաջնորդությամբ, առավել հետաքրքրված են ադրբեջանցիների նավթով, քան հայերի իրավունքներով: Այդ երկրներից մի քանիսը չեն վարանում ամենաանհեթեթ պատրվակներով հարձակվել անմեղ մարդկանց վրա եւ սպանել նրանց աշխարհի որեւէ վայրում, միաժամանակ քարոզելով ուրիշներին, որ անտեսեն այդ անարդարությունները: Նրանք անընդհատ հորդորում են հայերին մոռանալ անցյալը եւ բարեկամանալ թշնամի հարեւանների հետ:

Արեւմտյան ճնշումների ներքո Հայաստանի կառավարությունը փորձել է հնարավորինս հարմարվել այդ պահանջներին: Անցյալ տարի Հայաստանը ուրիշների թվում հրավիրեց նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի զինված ուժերի ներկայացուցիչներին մասնակցելու ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրով անցկացվող զորավարժություններին: Թուրքիան ընդունեց հրավերը եւ հարստորեն ծածանեց իր դրոշը հայկական հողում: Ադրբեջանը հրաժարվեց: Անցյալ ամիս Ադրբեջանում ՆԱՏՕ-ի անցկացրած միեւնույն ծրագրին մասնակցել ցանկացող հայ զինվորականները նվաստացուցիչ փորձառություն ձեռք բերեցին: Ադրբեջանական մի կազմակերպություն նույնիսկ սպառնաց ֆիզիկական հաշվեհարդար տեսնել նրանց հետ, եթե համարձակվեն դուրս գալ Բաքու: Հայաստանի արտգործնախարարությունը մեղմ մի բողոք հրապարակեց՝ հույս ունենալով, որ ՆԱՏՕ-ն կկշտամբի Ադրբեջանին:

Ամբողջ հարցն այն է, որ Թուրքիան, Ադրբեջանն ու միջազգային հասարակայնությունը Հայաստանի «դիվանագիտական քաղաքավարությունը» մեկնաբանում են որպես թուլության նշան: Հենց այդ մեղմ արձագանքներից էլ ոգեւորված ադրբեջանցի պաշտոնական այրերը վերջերս հայտարարեցին, որ Ղարաբաղի հարցում ամեն ինչ զրոյից են սկսելու:

Մինչեւ Հայաստանի ղեկավարները չխոսեն սպառնական տոնով, նրանք չեն հասնելու արդյունքի: Նրանց ավելի են ճնշելու եւ սպիտելու Ղարաբաղի հարցում անընդատ պայմաններ ընդունել: Որպես սկիզբ Հայաստանն անհապաղ պետք է հայտարարի, որ ղարաբաղյան հարցն արդեն տասը տարի կարգավորված է այնտեղ բնակվող հայերի վճռական դիրքորոշման շնորհիվ: Եթե Ադրբեջանը, Թուրքիան կամ միջազգային հասարակայնությունը գոհ չեն այդ իրավիճակից, ապա նրանք պարտավոր են որոշակի զիջումների դիմել, եթե ցանկանում են հաղթական ղարաբաղցիներին ընդունել տալ այլընտրանքային մի կարգադրություն: Ռազմաշունչ սպառնալիքներն արժեք չեն ներկայացնում: Ադրբեջանի անփորձ նախագահի «սուսեր ճոճելը» չի կարող վախեցնել հայկական կողմին:

Եթե ադրբեջանցիները վստահ լինեին իրենց ուժերին, չէին սպառնա. միանգամից կհարձակվեին: Բայց գիտեն, որ նման քայլի դեպքում պարզապես ավելի շատ տարածքներ կկորցնեն: Ավելին. կվտանգեն ադրբեջանական նավթի պաշարների արտահանման հեռանկարները:

Ներկայի այս անհաշտ պայմաններում բոլորովին անիմաստ է ՆԱՏՕ-ի, Եվրոպական միության կամ մի այլ կազմակերպության համար հայ, թուրք, ադրբեջանցի զինվորականների համատեղ զորավարժություններ կամ այլ միջոցառումներ կազմակերպելը: Եթե օտար երկրում՝ Հունգարիայում, ադրբեջանցի սպան կարող է կացնահարել հայ սպային, ի՞նչ ասես, որ չեն անի նրա հայրենակիցները Բաքու կամ Անկարա այցելող հայ ներկայացուցիչներին: Սարսափելի է անգամ մտածել:

ՆԱՏՕ-ն նույնիսկ պատասխանատվություն պետք է կրի հայ սպայի սպանության համար, որքան ինքը՝ ադրբեջանցի սպան: Մինչեւ բոլոր մասնակիցների անվտանգության պայմանները չապահովվեն, ոչ մի միջոցառում այդ երեք կամ այլ մի երկրում չպետք է անցկացվի:

ՎԱՐՈՒԺԱՆ ՄԱՄՈՒԼՅԱՆ

«Ռալիֆոռնիա կուրիեր»

Ինտեգրվել աշխարհին՝ սեփական արժեքների գիտակցմամբ

Աշխարհի ներկայունակում ոչ գույնն առավել նկատելի է, երբ ստեղծածդ է արժեքավոր, երբ դու տերն ու պահապանն ես ոչ արժեքների եւ կարողանում ես ներկայացնել դրանք:

Զված ազգային, նման բան առհասարակ չի կարող լինել, հենց թեկուզ այն հիմնավորմամբ, որ ի սկզբանե ամենը ծագել է մեկ էությունից: Մեկուսացված կղզյակ չենք եւ մեր դարավոր քրիստոնեական քաղաքակրթությամբ բաց ենք աշխարհի առաջ՝ տալու եւ առնելու իմաստով, որը բնավ չի ենթադրում գլխապտույտ մոռացությամբ տրվել օտար արժեքների կամ ներփակվել սեփական պայծանում: Այսօրվա հաղորդակցության առաջընթաց տեմպերին համընթաց անխուսափելիորեն փոխադարձ ներթափանցում-նյութափոխանակություններից հանկարծ ծնվում է վախը՝ սեփական դիմագիծը, նկարագիրը կորցնելու տագնապով: Եվ սա բնական է, որովհետեւ տեսակի պահպանման բնազդի թելադրանքով է ծնվում այս անհանգստությունը: Հատկապես անցնող տարիները բարեբեր պայմաններ ստեղծել են արդեն, որոնք հակասում են թե հոգեւոր, թե մշակութային-կրթական, թե կենցաղային-հոգեբանական-մենթալիտետային՝ ավանդական, գոնե սովետական տարիների մեր ունեցած ընդհանուր ընկալում-պատկերացումներին:

Համաշխարհայնացմանը կուլ չգնալու համար, երբ մեկուսանալը, մենք ենք՝ մեր սարերը, գոյակերպն անհնար է այլեւս, որովհետեւ նաեւ ինքնաոչնչացման է տանում, հարկավոր է պահպանել ու զարգացնել սեփական ներուժի լավագույնը, տեր դառնալ մարդկային մեր ռեսուրսին, եւ այն անհատներին, ովքեր կրում են արժեքային այդ համակարգը՝ գիտական, մտային, հոգեւոր ստեղծագործ ներուժը, ոչ թե գլխատել գիտությունը (կոռուպցիայի դեմ իբր պայքար մղելու կամ բանակը տգիտությունից փրկելու համար բանակ զորակոչել գիտության ուղին բռնած երիտասարդությանը):

Զարգացման ճանապարհ բռնելը ենթադրում է երկրի ներդաշնակ զարգացում բոլոր ուղղություններով եւ դժվար է հավատալ, թե երբեւէ առաջընթաց հնարավոր է շրջանցելով մտավոր ներուժը: Այսօր տաղանդավոր, սկզբունքային, ինտելեկտուալ անհատները գործում են հասարակության աչքից հեռու, այն դեպքում, երբ միջակությունները ջրի երես են դուրս եկել՝ դառնալով դրության տերը: Իսկ առհասարակ զարգացման հիմքը տվյալ երկրի կրթական համալիրի եւ հասարակության մեջ գործող բարոյական արժեքների համակարգն է: Մի՞թե նույն բանակի համար պակաս կարեւոր չէ՞ ոգու մարտունակությունը: Ընդհանուր հուսահատված վիճակներից ենք խոսում, եւ շատերը դա պայմանավորում են ոչ այնքան սոցիալական գործոններով, որքան բարոյալքության:

Ամեն փետրվարին տոնից տոն շրջանառու ենք դարձնում մինչեւ վերջերս մեզ անհայտ Վալենտինի օրվա վտանգավորության վարկածը: Ու այս սիրո տոնի խանդավառությունից վախեցած՝ Տյառնընդառաջի քրիստոնեական բուն խորհուրդն անտեսում, անգամ մեր եկեղեցու հայտարարած նորատակների տոնը, դարձնում ենք «հարս թոցնելու» օր, իբր մեր ազգային տոներին նախապատվություն տալու դրսեւորում: Գրեթե լռելյայն շրջանցում ենք միայն եկեղեցական տոների շարքում նկատված Սբ. Վարդանանց օրը՝ հերթական մի հիշեցում-լրացվություն ապահովելով: Դրա փոխարեն մեզ հետ որեւէ առնչություն չունեցող ինչ-որ կանանց միջազգային օրը՝ մարտի 8-ը, հռչակել ենք պետական տոն եւ ազգովին նշում ու նվերներ ենք կանանց տալիս:

Խղճի ազատության առաջին պատերազմն էր Վարդանանց պատերազմը եւ հայոց հողի վրա հոգեւոր այս ճակատամարտը մեր քրիստոնյա հետագա գոյերի խորհրդանշական սկիզբն էր՝ ոգու հաղթանակի բարոյականով: Այդ ինչո՞ւ սփյուռքահայ գաղութներում (լիբանանահայ, սիրիահայ) Սբ. Վարդանանց տոնն ազգային ամենամեծ տոնակատարություններից մեկն է. օտար որոշ պետություններում այդ օրը փակ են հայկական գործատեղիները, սպասարկման օբյեկտները, դպրոցները: Հայ ծառայողներն այդ օրը պետականորեն ազատ են արձակվում իրենց գործատեղերից: Ինչո՞ւ մեզ մոտ՝ հայրենիքում, Սբ. Վարդանանց տոնը դուրս չի գալիս եկեղեցական տոնացույցի սահմաններից եւ չի դառնում համազգային-համաժողովրդական: Մի՞թե Վարդանի կերպարը հայ երիտասարդի նկարագրի ձեւավորման համար լավագույն ոգեշնչող օրինակը չէ՞: (Հիշում եմ՝ տարիներ առաջ ինչպիսի հեղաբեկիչ նշանակություն ունեցավ «Վարդանանք» պատմավեպի ընթերցումը մի ամերիկամետ, արեւմտյան հովերով տարված երիտասարդի վրա՝ ճակատագրորեն փոխելով նրա կյանքի ընթացքը):

Փոխարենը կրթությունը ենթարկում եւ լուրջ ուշադրություն ենք դարձնում իր հայրենի երկրի սահմանները ընդարձակած մի տոնի՝ Վալենտինի օրվան, որ հռչակված է իբրեւ սիրո տոն (ի դեպ, մեզ մոտ բավական փոքր տարածում ունեցող. երբ հարցրի մի քանիսին, պատասխանեցին, թե ուրախանալու առիթ է ընդամենը, ինչ վտանգավոր բան կա դրանում): Իմիջիայլոց նկատենք՝ այն կարծիքը, թե վերոհիշյալ տոնը բիզնեսմենների շահին է նպաստում, խոցելի է, այդ ո՞ր տոնն է (ազգային թե համամարդկային) առանց նվերների կամ ծաղիկների նշվում: Չէ՞ որ մեր աշխարհը զգայական է, եւ մենք բավարարում ենք տալիս մեր զգայական պահանջին:

ՄԵԼԻՆԵՅԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Բուշը եւ Սաակաշվիլին խնդարկել են «վարդյա» հեղափոխությունն աշխարհի այլ մասերում տարածելու հնարավորությունը

Վրաստանի նախագահը մարտի 4-5-ը ժամանելու է Բաքու, ենթադրաբար մարտի 6-ին՝ Երեւան

5-օրյա այցով Ս. Նահանգներում գտնվող Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին փետրվարի 25-ին Վաշինգտոնում 45 րոպե տեւողությամբ զրույց է ունեցել նախագահ Ջորջ Բուշի հետ: Հանդիպումից հետո Բուշը, ըստ Սպիտակ տան տարածած հաղորդագրության, լրագրողներին ասել է. «Ես տպավորված եմ այս առաջնորդով, նրա հեռատեսությամբ, խիզախությամբ: Ես զգեւորված եմ, որ մենք ունենք այսպիսի ուժեղ ընկեր, որի հետ նույն արժեքներն ունենք»:

Վրացի լրագրողներից մեկը Բուշին հարցրել է. «Ի՞նչ եք մտածում Վրաստանում տեղի ունեցած «վարդյա» հեղափոխության մասին»: ԱՄՆ նախագահը պատասխանել է. «Վարդյա» հեղափոխությո՞ւնը: Դա պատմական պահ էր: Դա պահ էր, երբ լսվեց ժողովրդի ձայնը, երբ փոխվեց կառավարությունը, քանի որ ժողովուրդն իր ձայնը բարձրացրեց: Նախագահը (Սաակաշվիլին) եւ ես քննարկել ենք «վարդյա» հեղափոխությունն աշխարհի այլ մասերում տարածելու հնարավորությունը (անգլերեն տեքստում Բուշը գործածել է ramification բառը, որ բարգմանաբար նշանակում է ընձյուղ տալ, ճյուղավորում): Իրենց կյանքը սեփական ձեռքերում պահելու, հասարակությունը վերափոխելու ժողովուրդներին տրված հնարավորությունը վառ օրինակ է աշխարհի այն ժողովուրդների համար, ովքեր ձգտում են ազատության եւ ազնիվ կառավարություն ունենալու»:

Բուշը, ողջունելով Սաակաշվիլու Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու փորձերը, հորդորել է Մոսկվային հավասարիմ մնալ ստանձնած պարտավորություններին եւ ռազմականները դուրս բերել Վրաստանի տարածից: «Սամբուլի պարտավորությունները պարզորոշ նշում են, որ Ռուսաստանը պետք է հեռանա այդ տարածքներից (Բաթումից եւ Ախալքալաքից- խմբ.): Մենք շարունակելու ենք նախագահ Պուտինի հետ այդ պարտավորությունները կատարելու աշխատանքները», ասել է Բուշը:

Նախագահ Սաակաշվիլին ԱՄՆ այցելության ընթացքում հանդիպումներ է ունեցել պետքարտուղար Քոլին Փաուելի, պաշտպանության քարտուղարի տեղակալ Փոլ Վոլֆովիցի, բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ: Մասնավորապես Վոլֆովիցի հետ հանդիպման ավարտին Սաակաշվիլին ասել է, որ ռազմական ոլորտում վրաց-ամերիկյան հարաբերություններն ավելի կխորանան:

Սաակաշվիլին հույս է հայտնել, որ ամերիկացի բարեկամների օգնությամբ հնարավոր կլինի Վրաստանում ձեւավորել 10 հազարանոց մարտունակ բանակ, որից 5 հազարը կտեղակայվի Արեւմտյան Վրաստանում, մյուս 5 հազարը՝ Արեւելյան Վրաստանում: Սաակաշվիլին կրկնել է, որ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հակամարտությունների խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի, խոստանալով, որ ԱՄՆ օգնությամբ վարժված վրացական զորքերը չեն օգտագործվի ընդդեմ Վրաստանից անջատված շրջանների:

Մարտի 4-5-ը Սաակաշվիլին կայցելի Ադրբեջան, ենթադրաբար մարտի 6-ին՝ Հայաստան: Ռ. Հ.

Իսրայելի պատշգամբային պատը կկարճացվի 80 կիլոմետրով

Հաագայում գործող Միջազգային դատարանում ավարտվել են Իսրայելի պատշգամբային պատի կառուցման օրինականության հարցին նվիրված դռնփակ լսումները: Թեեւ հայտնի չէ, թե երբ է հրապարակվելու դատավճիռը, բայց Իսրայելն ամեն դեպքում հակված է շարունակելու պատի կառուցումը, որը պետք է կանխի պաղեստինցիների անձնասպանական ահաբեկչությունները:

Միաժամանակ Իսրայելի զինվորական աղբյուրներ վկայակոչելով Ֆրանսպրեսը հաղորդում է, որ պատի երկարությունը կրճատվելու է նախատեսված 720-ի փոխարեն հասցվելով 640 կիլոմետրի:

Վախենալով, որ Հաագայի դատարանի վճիռն իր համար շատ բացասական կլինի եւ ՄԱԿ-ի մի նոր բանաձեւի ընդունման պատճառ կդառնա, Արիել Շարոնի կառավարությունը հայտարարել է պատը 80 կմ-ով կարճացնելու մտադրության մասին:

«Հարեց» թերթի տվյալներով, պատի նոր ուղեգիծը թույլ կտա զերծ մնալ Այսրհորդանանում պաղեստինյան մի շարք բնակավայրերի մեկուսացման վտանգից: Տվյալ տարածքում նախատեսված է պաղեստինյան բոլոր բնակավայրերը թողնել պատի մի կողմում: Պաղեստինյան ինքնավարության իշխանությունները ընդունելի են համարում Իսրայելի պատշգամբային պատի կառուցումը՝ պաղեստինյան տարածքներով չանցկացվելու պայմանով:

Հաղորդվում է, որ 37 կիլոմետր պատը լինելու է բետոնից: Դրա 29 կիլոմետրը կառուցվելու է Երուսաղեմի շուրջը, որպեսզի քաղաքն անջատվի Այսրհորդանանից: Երուսաղեմի հարավում պատի կառուցումը ներկայումս ընդհատված է պաղեստինցիների հողազրկման հետ կապված մի շարք գանգատների քննության պատճառով:

Համալլայում իսրայելցիներն առգրավել են պաղեստինյան խմբավորումների փողերը

Իսրայելական բանակը զրահատեխնիկայի կիրառմամբ հատուկ գործողություն է իրականացրել Ռամալլա քաղաքում, որտեղ գտնվում է Պաղեստինյան ինքնավարության նախագահ Յասեր Արաֆաթի կենտրոնակայանը: Հորդանանի արեւմտյան ափին անցկացված գործողության նպատակն էր խուզարկություններ կատարել «Կահիրե-Ամման» բանկում, «Կենտրոնական պաղեստինյան բանկում» եւ «Արաբական բանկում»: Կուրսոր գործակալության տվյալներով, իսրայելական հատուկ ծառայություններն այնտեղ ստուգել են մոտ 400 բանկային հաշիվներ, որոնք հավանաբար պատկանում են պաղեստինյան տարբեր խմբավորումների անդամներին:

Խոսքը մասնավորապես «Համասի», «Իսլամական ջիհադի» եւ «Հզբոլլահի» մասին է: Հատուկ գործողության ընթացքում առգրավվել է մոտավորապես 7-9 մլն դոլար գումար: Իսրայելական կողմի պաշտոնական վարկածի համաձայն, գլխավորապես Իրանից եւ Լիբանանից ստացված այդ գումարները նախատեսված են եղել «ահաբեկչական գործողությունների ֆինանսավորման» համար: «Համասի» դամասկոսյան կենտրոնակայանից գումարները փոխանցվել են կեղծ ընկերությունների հաշիվներին: Ապա պաղեստինցի եւ իսրայելցի «լումայափոխների» ձեռքով անցնելով՝ գումարներն անցնում էին «Համասի» հաշիվներին, որոնք Պաղեստինյան ինքնավարությունում բացված են արաբական բանկերի մասնաճյուղերում: «Մաարիվ» թերթը նշում է, որ վերջին մեկ տարում այդ ձեւով «Համասի» հաշիվներին է փոխանցվել 1,6 մլն դոլար:

Իսրայելցի զինվորականները հայտարարել են, որ հատուկ գործողության նպատակներից մեկն էլ այն ապացույցների որոնումն էր, թե Յասեր Արաֆաթը եւ նրա մերձավորները մասնակցում են ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորմանը: Իսրայելի պաշտպանության նախարար Շաուլ Մոֆազը նշել է, որ առգրավված փողերը որպես մարդասիրական օգնություն հատկացվելու են խաղաղ պաղեստինցիներին: Եթե պարզվի, որ առգրավված բանկային հաշիվներից որեւէ մեկի տերը կապված չէ ահաբեկչական խմբավորումների հետ, նա հետ կստանա իր գումարները:

Պաղեստինի կենտրոնական բանկի կառավարիչը իսրայելցիների այդ գործողությունը որակել է «զինված հափշտակություն»

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Բորիս Գրիզլովը հավանաբար նշանակվի ՌԴ վարչապետ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը չորեքշաբթի օրը հանդիպել է «Միասնական Ռուսաստան» կուսակցության ղեկավարների հետ: Քանի որ հանդիպումն անցկացվել է դռնփակ, դրա անմիջական մասնակիցները կտրականապես հրաժարվել են լրատվամիջոցների ներկայացուցիչներին բացահայտել որեւէ մանրամասնություն:

Այդուհանդերձ կուսակցության աղբյուրները «Կոմերսանտ» թերթի թղթակցին հայտնել են, որ հանդիպման ընթացքում քննարկվել է Պետդումայի նախագահ Բորիս Գրիզլովին ՌԴ վարչապետ դարձնելու, իսկ Պետդումայի նախագահի պաշտոնում խորհրդարանի ներկայիս փոխնախագահ Ալեքսանդր Ժուկովին նշանակելու հարցը: Թերթի ստացած տեղեկությունների համաձայն, նախագահ Պուտինը կարող է Գրիզլովի թեկնածությունը Պետդումայի քննարկմանը ներկայացնել արդեն առաջիկա երկուշաբթի: Եթե դա տեղի ունենա, ապա արդեն չորեքշաբթի օրը խորհրդարանը կհաստատի նրա նշանակումը ՌԴ վարչապետի պաշտոնում:

Ինչ վերաբերում է նախագահ Պուտինի հրամանագրով օրերս պաշտոնանկ արված վարչապետ Միխայիլ Կասյանովին, նա պաշտոնավարում էր Բորիս Ելցինի ժամանակներից եւ շուտով լրացնելու էր մի ամբողջ «նախագահական ժամկետ»: Բայց Պուտինը կառավարության արձակման անակնկալ քայլով ամենին ապացուցեց, որ Ռուսաստանում ինքն է իրավիճակի տերը եւ դժգոհ է բարեփոխումների դանդաղ ընթացքից: Արձակված կառավարության անդամների հետ իր հանդիպման ժամանակ նախագահը հայտարարեց, որ ապագա կառավարությունում կատարվելու են քաղաքական եւ կառուցվածքային փոփոխություններ: Համենայն դեպս կարելի է ասել, որ մարտի 14-ին կայանալիք նախագահական ընտրությունների նախօրեին Վլադիմիր Պուտինը լիովին ապահովագրել է իրեն:

ՌԴ ԱԳՆ-ն «սադրանք» է համարում Քաբարում ռուս զորակալների ձերբակալությունը

Երեկ ռուսաստանյան լրատվամիջոցներին հայտնի է դարձել, որ Քաբարի իշխանությունները լույս փետրվարի 19-ի գիշերը ձերբակալել են Ռուսաստանի հատուկ ծառայությունների 3 աշխատակիցների եւ նրանցից երկուսին մեղադրում են Չեչնիայի նախկին փոխնախագահ Զելիմխան Յանդարբիեւի սպանության կազմակերպման մեջ: **«Ազգ»** օրերս տեղեկացրել է Քաբարում Յանդարբիեւի սպանության մասին: Նա համարվում էր բազմաթիվ ահաբեկչությունների, այդ թվում մոսկովյան «Նորդ-Օստում» իրականացված առեւանգման կազմակերպիչը:

ՌԴ արտգործնախարար Իգոր Իվանովը Քաբարում 3 ռուսաստանցիների ձերբակալությունն անվանել է «սադրանք»: Այդ մասին հաղորդվում է նախարարի հայտարարության մեջ, որը երեկ հրապարակվել է ԱԳՆ ինտերնետային սայթում: Չորեքշաբթի օրը ՌԴ ԱԳՆ էր կանչվել Քաբարի դեսպանը, որին Իվանովն ասել էր, թե երեք ռուսաստանցիների ձերբակալությունը «սադրանք» է, քանի որ նրանք «որեւէ առնչություն չունեն» Յանդարբիեւի սպանության հետ: Իվանովը Քաբարի իշխանություններից պահանջել է «անհապաղ ազատ արձակել ապօրինաբար պահվող ռուսաստանցիներին եւ նրանց ընձեռել անարգել հայրենիք վերադառնալու հնարավորություն»:

Իրաքցի քրդերը պահանջում են անկախության հանրաքվե

Հյուսիսային Իրաքի քրդական կիսաինքնավար տարածքներում քուրդ ակտիվիստները բնակիչներից 1,7 մլն ստորագրություն են հավաքել այն փաստաթղթի տակ, որով պահանջվում է անցկացնել տարածաշրջանի անկախության հանրաքվե: BBC-ի հաղորդման համաձայն, տվյալ պահանջագիրը փոխանցվել է Իրաքի կառավարման ժամանակավոր խորհրդին եւ վերջինիս վերահսկող ամերիկյան վարչակազմին:

Առաջարկվում է ազգային հանրաքվեի դնել այն հարցը, թե պե՞տք է արդյոք Քրդստանը հռչակել ինքնուրույն պետություն, թե՞ նախընտրելի է տարածքը ընդգրկել նոր Իրաքի դաշնային կառույցի մեջ: Ինչպես հայտնի է, ԱՄՆ վարչակազմը դեմ է քրդական պետության ստեղծմանը եւ սպառնում է զինված միջամտություն նման պետության հռչակման դեպքում: Հակահրաքյան կոալիցիայում ԱՄՆ-ի դաշնակից Թուրքիան տարիներ շարունակ պայքարում է քրդերի անջատականության դեմ եւ ամերիկացիների վրա ճնշում է գործադրում՝ ջանալով թույլ չտալ քրդական ինքնավարության ստեղծում:

Սակայն քուրդ բնակչության ներկայացուցիչները պնդում են, թե Իրաքում մեծամասնություն կազմող արաբները տարիներ շարունակ խտրականության են ենթարկել քրդերին, ուստի վերջիններիս հեռագնա նպատակը սեփական պետության ստեղծումն է:

Արեւմուտքը չի օգնի Հայիթիի նախագահին

Ֆրանսիայի իշխանությունները պահանջել են, որ Հայիթիի նախագահ Ժան-Բերտրան Արիստիդը հրաժարական տա, ինչը հնարավոր կդարձնի երկրի դուրսբերումը «փակուղուց», որտեղ Հայիթին հայտնվել է ապստամբների գործողությունների հետեւանքով: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երկրում արդեն մեկ տասնյակ քաղաքներ գրաված ապստամբական ուժերը սպառնում են հարձակվել մայրաքաղաք Պորտ օ Պրենսի վրա, որպեսզի գերի վերցնեն նախագահին եւ նրան դատեն «պետական դավաճանության» համար:

Միաժամանակ Ռոյթեր գործակալությունը տեղեկացնում է, որ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը մերժել է ապստամբությունը ճնշելու նպատակով Հայիթի խաղաղարար ուժեր ուղարկելու Ժան-Բերտրան Արիստիդի խնդրանքը: Բուշը կղզու բնակիչներին զգուշացրել է, որ չփորձեն ապստամբ փնտրել ԱՄՆ-ի տարածքում: Ապստամբները համաձայն չեն իշխանությունը կիսել նախագահի հետ եւ պահանջում են նրա հրաժարականը: Բուշն իր մերժումը պատճառաբանել է նրանով, որ խաղաղարար ուժերի ուղարկումը հնարավոր է միայն հակամարտության քաղաքական կարգավորման դեպքում: Ամերիկացի 50 ծովային հետեւակայիններ միայն Պորտ օ Պրենս են մեկնել ԱՄՆ դեսպանությունը պաշտպանելու:

Կանադայի կառավարությունը հավանություն է տվել Ջորջ Բուշի որոշմանը, նշելով, թե շարունակվող մարտերի պայմաններում Հայիթի խաղաղարար ուժեր ուղարկելը կլիներ «կատարյալ խելահեղություն»: Պ. Բ.

Մշակույթ

ՅՈՒՆԵՍԿՕ-ին առընթեր գործող ԻԿՈՄՈՍ միջազգային կազմակերպությունն իր մասնաճյուղը Հայաստանում հիմնադրել է 2001 թ., որի նախագահ է ընտրվել Գագիկ Գյուրջյանը: Հայաստանի կազմակերպությունն այն 106 երկրների թվում է, որոնք զբաղվում են պատմամշակութային հուշարձանների պահպանության, նրանց ոչնչացումից փրկելու եւ վերանորոգելու խնդիրներով: Դեռ 2002-2003 թթ. բազմաթիվ քննարկումներ եղան Հին Զուղայի հայկական միջնադարյան գերեզմանոցի ավերման կապակցությամբ: Հայաստանյան կազմակերպությունը հարցն իր վարչության նիստերում բազմիցս քննարկելուց հետո որոշում է ընդունում դիմել ԻԿՈՄՈՍ-ի միջազգային կազմակերպության նախագահ Մայքլ Պեցեցին, ինչպես նաեւ ԻԿՈՄՈՍ-ի անդամ երկրներին կոչ անելով միջոցներ ձեռնարկել այդ բարբարոսական գործողությունները դադարեցնելու ուղղությամբ եւ մասնավորապես միջնորդել, որպեսզի ՅՈՒՆԵՍԿՕ-ն տարածաշրջան ուղարկի դիտորդների խումբ հայ եւ ադրբեջանցի մասնագետների մասնակցությամբ հուշարձանների ավերման փաստը տեղում ուսումնասիրելու, համապատասխան գնահատական տալու, հնարավորինս վերականգնելու համար, ամենակարեւորը հետագայում նման երեւույթները բացառելու նպատակով: Դիմում-կոչի հետ ուղարկվել էին նաեւ Զուղայում հուշարձանների ավերման փաստերն արտացոլող լուսանկարներ համապատասխան մեկնաբանություններով: Ինչպես նշեց պրն Գյուրջյանը, ճիշտ մեկ տարի առաջ ստացվել է ԻԿՈՄՈՍ-ի նախագահ Մայքլ Պեցեցի պատասխան նամակը, որում հայտնվում էր, որ ինքը «դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին: Նախիջեւանում հայկական պատմամշակութային հուշարձանների ավերման գնահատականը տալու առաքելությամբ, մասնագետներ ուղարկելու համար եւ հետամուտ կլինի դրա իրականացմանը»:

Նոր Զուղայի հուշարձանների բարբարոսաբար ավերման հարցը բարձրացվել է նաեւ Եվրախորհրդի միջխորհրդարանական վեհաժողովում հայ պատգամավորների կողմից (Ասոն Գալոյան), որի արդյունքում որոշում էր կայացվել Եվրախորհրդի համապատասխան հանձնախումբ ուղարկել՝ հարցը տեղում ուսումնասիրելու նպատակով: Սակայն մինչ օրս որեւէ հանձնախումբ չի այցելել տարածաշրջան: Խնդրին անդրադարձել է նաեւ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանն իր ելույթում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ժողովում, որտեղ նույնպես հնչել է հիմնավորված պահանջը՝ այս բարբարոսությանը գնահատական տալու վերաբերյալ:

ԻԿՈՄՈՍ միջազգային կազմակերպությունը հրատարակում է տարեգիրք: Մայքլ Պեցերի ջանքերով Հին Զուղայի հուշարձանների ավերման մասին տեղեկություններ են տպագրվել տարեգրքում, որը հրատարակում է ԻԿՈՄՈՍ-ը եւ անվանվում է «Վտանգված հուշարձանների վերաբերյալ հաշվետվություններ» կամ՝ «Վտանգված ժառանգություն»: 2002-2003 թթ. թողարկված հաշվետվություններում Հայաստանը՝ եւս ներկայացված է, որի բացատրագրում՝ բառացիորեն նշված է հետեւյալը. «Համաշխարհային մասնաճյուղի այս՝ երրորդ հրատարակությունը, որտեղ ամփոփված են զեկույցներ շուրջ 60 երկրներից, լրացնում է նախորդ հրատարակություններում ընդգրկված տեղեկությունը: Երկրորդ հրատարակության կազմի առաջին եւ վերջին էջին պատկերված են Բամիանի բուդդաների արձանները, որոնք 2001 թ. մարտին պայթեցվել են թալիբների կողմից: Այս հրատարակության կազմի վերջին էջը ներկայացնում է հայկական հազարավոր խաչքարերի վերը նշված գործողությանը հավասարազոր՝ բարբարոսական ոչնչացումը, քրեական մի գործողություն, որը համարյա անծանոթ է հասարակությանը եւ որի համար Ադրբեջանի կառավարությունը պետք է պատասխանատվություն կրի»: Այս փաստը շատ արժեքավոր է այն առումով, որ ամենակարեւոր միջազգային կազմակերպությունը (այս բնագավառի) նման արձագանք ու գնահատական է տվել կատարվածին, նշեց Գագիկ Գյուրջյանը եւ ավելացրեց, որ «...մեր իշխանությունները, ԱԺ-ն եւ հասարակական կազմակերպությունները պետք է

ԻԿՈՄՈՍ-ի տարեկան հաշվետվությունում տեղ են գտել Նոր Զուղայի հուշարձանների մասին տեղեկություններ



շարունակեն սկսված գործընթացը: Զուղայի գերեզմանոցի եւ խաչքարերի պատմամշակութային արժեքի եւ հիշյալ ոճրագործության պատմական ու աշխարհաքաղաքական դրդապատճառների մասին տեղեկագրքում տպագրվել է ԻԿՈՄՈՍ/Հայաստանի կազմակերպության անդամ, ՀԱԱ նախագահ Արմեն Հախնազարյանի եւ Դիքեր Վիքմանի հոդվածը:

Բացի Զուղայի խաչքարերի բարբարոսական ոչնչացմանը վերաբերող նյութերից, տարեգրքում տեղ են գտել նաեւ մեր մասնաճյուղի պատրաստած՝ եւս երեք հուշարձանի մասին տեղեկություններ: Ներկայացված են Արթիկի Սբ. Աստվածածին (5-6-րդ դդ.), Խաչիկ գյուղի Քարկոփի (10-րդ դ.) եկեղեցիները եւ Արարատի մարզի Լուսագյուղի Սբ. Աստվածածին կամ Սոիսակավոր (14-րդ դ.) եկեղեցական համալիրը: Դրանք յուրօրինակ հայտեր են՝ այդ հուշարձանների պահպանության խնդիրները բարձրացնելու եւ դրանց վերականգնման համար ֆինանսական միջոցներ գտնելու համար: Նման հնարավորություններ մի շարք երկրներ արդեն օգտագործել են, եւ հուսանք, որ մեզ եւս կհաջողվի դա անել», այսպիսի լավատեսական նոտայով ավարտեց իր հանդիպումը լրագրողների հետ պրն Գյուրջյանը:

ԻԿՈՄՈՍ/Հայաստանն օգտագործում է միջազգային ԻԿՈՄՈՍ-ի ընձեռած բոլոր հնարավորությունները՝ հայկական հուշարձանների պահպանման նպատակով միջազգային հասարակական կարծիքն օգտագործելու, ինչպես նաեւ հայկական հուշարձանները միջազգային ներդրումային ծրագրերում ընդգրկելու համար:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Ճանաչենք իմքներս մեզ, որպեսզի չկորցնենք

Ով կորցրել է ու չգիտե, ինչ է կորցրել, չի կարող խուսափել նոր կորուստներից: Այս մտահոգությամբ փետրվարի 25-ին Ալեքսանդր Թամանյանի տուն-թանգարանում Սամվել Կարապետյանը բացեց «Հաղթանակած երկրի կորցրած տարածքները» խորագրով ցուցահանդեսը, որ կազմակերպել է 1960 թ.-ից գործունեություն ծավալած «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը:

Ցուցահանդեսին ներկայացված շուրջ 100 լուսանկարները, որոնք հիմնականում հեղինակել է Սամվել Կարապետյանը, պատմում են Հյուսիսային Արցախի հայկական բնակավայրերի, կենցաղի, մշակույթի մասին: Լուսանկարները բացառիկ են, քանի որ անդրադառնում են մի տարածքի, որը հայաթափված է եւ գտնվում է Ադրբեջանի տիրապետության տակ: Չնայած տարածքի բոլոր 400 բնակավայրերում, որոնցից միայն 50-ն էր 80-ականներին հայաբնակ մնացել, մինչ օրս առկա են հայկական մշակույթի արժեքներ: Վերջիններիս փոշիացման, վերացման փաստերը ցավով ընդգծելով Սամվել Կարապետյանը կարեւորեց իմքնաճանաչողության խնդիրը եւ, որպես ցուցահանդեսի առանցքային նպատակ, ներկայացրեց հենց իմքնաճանաչողության փորձ հնարավորություն տալը: Նշված նպատակը կազմակերպությունը ավելի լայն մասշտաբով իրականացնում է նաեւ դաշտային ուսումնասիրությունների, դրանք գիտական ուսումնասիրությամբ համալրելու եւ հրատարակելու միջոցով:

Սամվել Կարապետյանի շուրջ երկարամյա աշխատանքի արդյունքում հրատարակության է պատրաստվել 27 անուն գիտական աշխատություն, որոնցից 5-ը «Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը», «Վրաց պետական քաղաքականությունը եւ հայ մշակույթի հուշարձանները», «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում», «Թիֆլիսի քաղաքագլուխները» արդեն հրատարակվել են, մի մասը նաեւ ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Հրատարակման ֆինանսավորումը բոլոր 5 դեպքերում էլ իրականացրել են սփյուռքահայեր: Ընդգծելով, որ ինչպես արդեն տպագրված, այնպես էլ տպագրվելիք աշխատությունները Հայաստանի Հանրապետության համար ունեն ռազմավարական նշանակություն, Սամվել Կարապետյանը ցավով հայտնեց, որ չկա ոչ միայն դրանց հրատարակման խնդրին պետական մոտեցում, այլեւ բացակայում է հայաստանաբնակ որեւէ գործարարի հետաքրքրությունը: Չնայած դրան, մեկ ամսից կհրատարակվի «Հյուսիսային Արցախի պատմական հուշարձանները» աշխատությունը, որի բաժանորդագրությունն իրականացվում էր նաեւ ցուցահանդեսի ընթացքում: Այցելուների, որոնց շարքում կային թե՛ մշակույթի, թե՛ քաղաքական գործիչներ ու թե՛ հասարակության այլ ներկայացուցիչներ, հետաքրքրությունն ակնհայտորեն մեծ էր: Նույն իմքնաճանաչողության նպատակով «Հաղթանակած երկրի կորցրած տարածքները» խորագրով ցուցահանդեսն ուղեկցվում էր «Կարին» ազգագրական երգի-պարի անսամբլի ելույթով, որն անբախելի ոգեւորություն պատճառեց ներկաներին:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Քրիստոսի չարչարանքները» ֆիլմը ցուցադրվեց միանգամից 3600 կինոթատրոններում

Հոլիվուդյան աստղ Մել Գիբսոնի ռեժիսորական աշխատանքը՝ «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմը դեռ ցուցադրությունից առաջ բուռն վեճերի պատճառ էր դարձել: Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերը եւ մասնավորապես խաչելությունը պատկերող ֆիլմը, հրեական մի շարք կազմակերպությունների կարծիքով, հակահրեական ուղղվածություն ունի:

Առեւտրային տեսակետից, սակայն, ֆիլմի հաջողությունն անվիճելի է: Նկարահանումների վրա ծախսվել է 25 մլն դոլար, գրեթե ամբողջ գումարը Մել Գիբսոնի անձնական փողերն են: Այն պնդումները, թե ֆիլմը հակահրեական է, վիրավորում է հավատացյալների զգացմունքները եւ այլն, իրականում մեծացրին հետաքրքրությունը Մել Գիբսոնի աշխատանքի նկատմամբ: Սկզբում նախատեսված էր ֆիլմի սահմանափակ ցուցադրություն, բայց մեծ պահանջարկը ստիպեց չորեքշաբթի օրն այն էկրան հանել միանգամից ամերիկյան 3600 կինոթատրոններում: Սա գրեթե ռեկորդային թիվ է: Ասոցիացիայի պրեսը հաղորդում է, որ կրոնական որոշ կազմակերպություններ իրենց ծխականների համար վարձել են ամբողջ կինոթատրոններ:

Նախնական տվյալներով, ցուցադրության առաջին իսկ օրը տոմսարկղային մուտքերը կազմել են 15-20 մլն դոլար: Սպասվում է, որ շաբաթավերջին հանդիսականներն էլ ավելի շատ կլինեն: Միակ ցավալի միջադեպն այն է, որ Վիչիտա քաղաքում (Կանզասի նահանգ) ցուցադրության առաջին օրը հենց կինոթատրոնում սրտի նոպայից մահացավ 50-ամյա մի կին:

Դեռ ցուցադրությունից առաջ ֆիլմը քննադատվում էր դաժան տեսարանների առատության եւ նացիոնալիզմի համար: Որոշ քննադատներ նշում էին, որ համաշխարհային կինեմատոգրաֆի պատմությանը հայտնի չեն Քրիստոսի խաչելության առավել արյունալի պատկերներ: Իսրայելի գերազգայնական կրոնական «Շաս» կուսակցության առաջնորդ Էլի Յիշայը համոզված է, որ ուղղահավատ հրեաները չպետք է դիտեն «հակահրեական» ֆիլմը: Նա կոչ է անում Իսրայելում արգելել դրա ցուցադրությունը:

Յիշայի կարծիքով, ամբողջ ֆիլմն «արյունոտ մեղադրանք» է Հիսուսին խաչած հրեաների հասցեին: Նա կանխագուշակել է, թե Գիբսոնի ֆիլմն աշխարհում հակահրեականության ալիք կբարձրացնի, քանի որ «Քրիստոսի մահվան մեջ մեղադրում է հրեաներին»:

Պ. Ռ.

Ռաֆայել Վահանյանը մրցանակակիրների թվում է

Մոսկվայում վերջնագիծը հասեց «Սերոֆլոտի» հովանու ներքո անցկացված շախմատային փառատոնը: Հայտնի դարձան մրցանակակիրները նաեւ ուժեղագույնների մրցաշարում: Հուրախություն հայ մարզասերների, առաջատարների թվում է Հայաստանի պատվիրակներից ամենափորձառու ու տիտղոսակիր շախմատիստը՝ միջազգային գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանը: Ավարտական տուրում հայ գրոսմայստերը սեւերով հաղթեց ֆրանսիացի Ժոյել Լոթյեին: Աղյուսակը գլխավորող Վալերի Ֆիլիպովը ոչ-ոքի ավարտեց պարտիան Պավել Տրեգուբովի հետ: Սերգեյ Ռուբլյովսկին սեւերով հաղթեց Իգոր Խենկինին: Արդյունքում երեք շախմատիստներ՝ Վահանյանը, Ռուբլյովսկին ու Ֆիլիպովը վաստակեցին հավասար 7-ական միավոր: Գործակիցների աղյուսակի հիման վրա հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Սերգեյ Ռուբլյովսկին: Ռաֆայել Վահանյանը գրավեց 2-րդ տեղը, իսկ 3-րդ հորիզոնականը զբաղեցրեց Վալերի Ֆիլիպովը:



Ռաֆայել Վահանյանն իրոք արժանի է դրվատանքի: Նա շաս վստահ ելույթ ունեցավ՝ այդպես էլ չճաակելով պարտության դառնությունը: 9 հանդիպումներից 5-ում նա հաղթեց, 4-ն ավարտեց ոչ-ոքի: Հայ շախմատիստներից 2-րդ արդյունքը ցույց տվեց Տիգրան Պետրոսյանը: Հաղթելով Դմիտրի Յակովենկոյին, Տիգրանը վաստակեց 6 միավոր եւ զբաղեցրեց 21-րդ տեղը: Հաղթանակ տոնեց նաեւ Արման Փաշիկյանը՝ պարտության մատնելով վրաց շախմատիստ Լեւան Պանցուլայային: Արմանը շաս անհաջող սկսեց մրցաշարը՝ կրելով 4 անընդմեջ պարտություն: Իսկ ահա, վերջնագծում 5 պարտիաներից 3-ում հաղթեց, 2-ն ավարտեց ոչ-ոքի եւ 4 միավորով տեղ զբաղեցրեց 142-րդ հորիզոնականում:

Վերջին տուրում մեր շախմատիստներից շատերը խաղաղասիրաբար էին տրամադրված: Կարեն Ասրյանը, Սերգեյ Մովսիսյանը, Գաբրիել Սարգսյանը, Սերգեյ Գրիգորյանցը, Լեւոն Արոնյանը եւ Էլինա Դանիելյանը խաղաղ դաշն կնքեցին մրցակիցների հետ: Իսկ ահա, Արա եւ Արշաքս Մինասյանները պարտություն կրեցին:

Մեր մյուս շախմատիստների ամփոփիչ ցուցանիշներն այսպիսին են. Արա Մինասյան, Լեւոն Արոնյան, Կարեն Ասրյան, Գաբրիել Սարգսյան՝ 5,5-ական միավոր, Արշաքս Մինասյան՝ 5, Սերգեյ Մովսիսյան՝ 4,5, Սերգեյ Գրիգորյանց՝ 4, Էլինա Դանիելյան՝ 3: Հայաստանի անցյալ տարվա լավագույն մարզուհին թույլ անցկացրեց ողջ մրցաշարը: Նրան այդպես էլ չհաջողվեց հաղթանակ տոնել՝ կրելով 4 պարտություն:

Ջորջ Ֆորմենը մտադիր է վերադառնալ ռինգ

Հանրահայտ պրոֆեսիոնալ բոքսիամարտիկ Ջորջ Ֆորմենը որոշել է վերադառնալ ռինգ: 55-ամյա բոքսիամարտիկն արդեն պայմանագիր է կնքել Դոն Քինգի հետ եւ առաջիկա մենամարտի համար 20 մլն դոլար կստանա: Նման յուրօրինակ ծեւով Ֆորմենը ցանկանում է նշել Զահրում Մուհամեդ Ալու հետ անցկացրած պատմական մենամարտի 30-ամյակը: 1973 թ. Ջորջ Ֆորմենը նոկաուտի ենթարկելով Ջո Ֆրեզերին, նվաճել էր աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Սակայն հաջորդ տարի Զահրում անցկացված մենամարտում նա զիջել էր Մոհամեդ Ալուն: Այդ անհաջողությունից հետո նա շուտով հրաժարվեց տվեց ռինգին, սակայն 1987 թ. կրկին վերադարձավ մեծ սպորտ: 1994 թ. 45 տարեկանում Ֆորմենը որոշեց Ալու հետ մենամարտի 20-ամյակը նշել ռինգում: Նա շահեց մենամարտը Մայք Մուրից եւ դարձավ գերծանր քաշային կարգում ամենատարիքով չեմպիոնը: Իր վերջին մենամարտը Ֆորմենն անցկացրել է 1997 թ.՝ միավորներով հաղթելով Շենոն Բրիսին: 1998 թ. աշխարհի նախկին չեմպիոնը հրաժարվեց տվեց ռինգին: Պրոֆեսիոնալ բոքսիամարտիկի իր հարուստ կենսագրությունում Ֆորմենը տոնել է 76 հաղթանակ (որից 68-ը՝ նոկաուտով) եւ կրել ընդամենը 5 պարտություն:

Ռինգին հրաժարվելուց հետո Ֆորմենը զբաղվում էր բիզնեսով, նկարահանվում էր գովազդային տեսահոլովակներում, բոքսիամարտի մենամարտեր էր մեկնաբանում: Դա նրան ավելի քան 150 մլն դոլարի եկամուտ էր ապահովում: Ֆորմենը պատրաստ է բժշկական հետազոտության ենթարկվել եւ կատարել այն պահանջները, որոնք ներկայացվում են 25-ամյա բոքսիամարտիկներին: Նա նշել է, որ գտնվում է հիանալի ֆիզիկական մարզավիճակում: Ապրիլ դեռ հայտնի չէ, երբ եւ ում հետ կանցկացնի մենամարտը Ջորջ Ֆորմենը: Նա ցանկություն է հայտնել մենամարտել հարազատ քաղաքում՝ Հյուստոնում:

Շիրովն ընդհատեց ոչ-ոքիների շարքը

Մեկօրյա հանգստից հետո Լիմարեսի շախմատային մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջ: 6-րդ տուրում վերջապես ընդհատվեց ոչ-ոքիների երկար շարքը: Ալեքսեյ Շիրովին հաջողվեց 66-րդ քայլում պարտության մատնել Թեյմուր Ռաջաբովին: Տուրի կենտրոնական հանդիպումը Թոփալովի եւ Կասպարովի մրցավեճն էր: Սկզբնախաղում հետ մղելով Թոփալովի գրոհները, Կասպարովն ինքն անցավ ակտիվ գործողությունների: Սակայն բուլղարացի գրոսմայստերը կարողացավ չեզոքացնել սպառնալիքները, եւ կողմերը հաշտություն կնքեցին: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Վալյեխո-Լեկո պարտիան: Այստեղ մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին 25-րդ քայլին:

Վեց տուրից հետո մրցաշարում երկիբանություն է: Աղյուսակը 3-ական միավորով գլխավորում են Շիրովն ու Լեկոն, որոնք անցկացրել են 5-ական հանդիպում: Թոփալովը, Վալյեխոն ու Կասպարովն ունեն 2,5-ական միավոր, իսկ Ռաջաբովի ու Կրամնիկի հաշվին գրանցված է 2-ական միավոր:

Ֆուտբոլային խուլիգաններին կարգելվի Պորտուգալիա մեկնել

Պորտուգալիայում կայանալիք ֆուտբոլի եվրոպայի առաջնության կազմակերպիչները մտադիր են լրջորեն պայքարել Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի եւ Հոլանդիայի ֆուտբոլային խուլիգանների դեմ: Արդեն համաձայնություն է ձեռք բերվել Մեծ Բրիտանիայի կառավարության հետ, որը 2,5 հազար ֆանատների չի թույլատրելու մեկնել Պորտուգալիա՝ նրանցից վերցնելով անձնագրերը: Իր հերթին Գերմանիան էլ խոստացել է արգելել առավել ագրեսիվ տրամադրված մոտ 4,5 հազար ֆանատների մեկնումը երկրից:

Պորտուգալիայի կառավարությունն իր հերթին 16,5 մլն եվրո է հատկացրել ոստիկանությանը 150 նոր մեքենաների, ջրցան մեքենաների, մահակների, արցունքաբեր գազի, պաշտպանիչ սարքավորումների գնման եւ շների ձեռքբերման համար: Աշխարհի առաջնության անցկացման ժամանակ պորտուգալացի ոստիկանների արձակուրդները կհետաձգվեն, բացի այդ լրացուցիչ կհավաքագրվեն 2 հազար ոստիկաններ: Սպասվում է, որ ոստիկաններ կժամանեն նաեւ առաջնության մասնակից երկրներից:

Չամբերսը որակազրկվել է

100 մ վազքում 2002 թ. եվրոպայի չեմպիոն, բրիտանացի թեթեւատլետ Դուեյն Չամբերսը չի մասնակցի Աթենքի օլիմպիական խաղերին: Նա Մեծ Բրիտանիայի թեթեւ ատլետիկայի ֆեդերացիայի կողմից որակազրկվել է 2 տարով արգելված խթանիչ օգտագործելու համար: 25-ամյա Չամբերսի արյան անալիզում անցյալ տարվա օգոստոսին հայտնաբերվել էր տեստոստերոնի: Չամբերսի որակազրկման ժամկետը հաշվվելու է նոյեմբերից:

ՇԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

Գերմանական ակումբներից հաջողությունը երես է թեքել

Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի հանդիպումներում կարծես հաջողությունը երես է թեքել գերմանական ակումբներից: Մյունխենի «Բավարիան» Մադրիդի «Ռեալի» հետ խաղում թեեւ զգալի առավելություն ուներ, սակայն Օլիվեր Կանի սխալի հետեւանքով զրկվեց հաղթանակից: Եվ ահա, գերմանական մյուս ակումբն էլ՝ «Շտուտգարտը», պատահական գոլի հետեւանքով սեփական հարկի տակ զիջեց «Չելսիին»: Առաջին խաղակեսին գերմանացի ֆուտբոլիստները գոլային մի քանի ռեալ պահ չօգտագործեցին, իսկ ահա, հյուրերի հակագրոհներից մեկի ժամանակ գոլ խփեցին սեփական դարպասը: 12-րդ րոպեին Ջոնսոնի փոխանցումը փորձելով կանխել, «Շտուտգարտի» պորտուգալացի ֆուտբոլիստ Ֆեռնանդո Մեյրան գնդակն ուղարկեց սեփական դարպասը: «Չելսիի» կազմում վնասվածքի հետեւանքով չէր խաղում ռումինացի Ադրիան Մուտուն: Բայց փոխարենը թիմ էին վերադարձել դարպասապահ Կուդիչինին եւ արգենտինացի հարձակվող Կրեսպոն: Խաղասկզբում «Շտուտգարտը» երկու վտանգավոր գրոհ կազմակերպեց, սակայն Մայսները չկարողացավ իրացնել գոլային պահերը: Իսկ 19-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո կուրանին գլխի հարվածով փորձեց գրավել «Չելսիի» դարպասը, սակայն Բրիջը գնդակը հեռացրեց դասարկ դարպասից:

Երկրորդ խաղակեսում էլ «Չելսին» հաջողությամբ դիմագրավեց «Շտուտգարտի» գրոհները եւ 1-0 հաշվով հաղթանակ տոնեց՝ լուրջ հայտ ներկայացնելով քառորդ եզրափակիչի ուղեգրի համար:

Հյուրընկալվելիս հաջողությունն ուղեկցեց նաեւ Ֆրանսիայի չեմպիոն «Լիոնին»: «Ռեալ Սոսյեդադի» հետ խաղում էլ միակ գոլն իրենց դարպասն անցկացրին դաշտի տերերը: «Աչքի ընկավ» արգենտինացի պաշտպան Շուրեը: Սակայն ի տարբերություն «Շտուտգարտի», իսպանացիները պետք է գոհ լինեն ճակատագրից, որ նվազագույն հաշվով են պարտվել: «Լիոնը» հիանալի խաղ ցուցադրեց եւ գոլային մի շարք պահեր ստեղծեց, սակայն չկարողացավ իրացնել:

Պորտուգալական «Պորտոն» սեփական հարկի տակ կամային հաղթանակ տոնեց «Մանչեսթր յունայթեդի» նկատմամբ: Հյուրերը հաշիվը բացեցին 14-րդ րոպեին: Աչքի ընկավ Ֆորլանը: Սակայն 15 րոպե անց Մաքֆարսնին վերականգնեց հավասարակշռությունը: Վերջինիս վիճակված էր դառնալ հանդիպման հերոսը: 78-րդ րոպեին Մաքֆարսնին 2-րդ գնդակն ուղարկեց Անգլիայի չեմպիոնի դարպասը եւ հաղթանակ պարգեւեց պորտուգալացիներին (2-1): Խաղի վերջին րոպեներին դաշտի տերերի դարպասապահ Վիտոր Բայայի նկատմամբ կոպիտ խաղալու համար դաշտից հեռացվեց «Մանչեսթր յունայթեդի» ավագ Ռոյ Քինը, որը չի մասնակցի պատասխան հանդիպմանը:

Դաշտի տերերին հաջողությունն ուղեկցեց նաեւ «Դեպորտիվո»-«Յուվենտուս» խաղում: Հանդիպման ելքը վճռեց 37-րդ րոպեին Լուկեի խփած միակ գոլը: Իսպանացիները կարող էին խոշոր հաշվով հաղթել, եթե գոլային պահերը օգտագործեին Վալերոնը, Վիկտորը եւ Տրիստանը: Սակայն իտալացիներն էլ իրենց հերթին ծեռից բաց թողեցին գոլ խփելու հիանալի հնարավորությունները: Երկու անգամ հաջողությունը երես թեքեց Ալեսանդրո դել Պիերոյից, մեկ անգամ էլ նոպաստավոր դիրքից վրիպեց Միկոլին:

Բրեթ Խալը կրկնեց լավագույն ցուցանիշը

Հոկեյի ազգային լիգայի առաջնության հերթական խաղում լեգենդար հոկեյիստ Բոբի Խալի որդին՝ Բրեթը կրկնեց Դեյվ Անդրեյչակի ռեկորդը: «Դետրոյթի» հարձակվողը «Ֆինիքսի» հետ խաղում իրացրեց թվային առավելությունը՝ խփելով նման պայմաններում իր 263-րդ տափօղակը: Մարզական իր գործունեության ընթացքում դա արդյունավետության 3-րդ ցուցանիշն է: Լավագույն ռմբարկուների ցուցակը գլխավորում է լեգենդար հոկեյիստ Ուեյն Գրեցկին՝ 894 գոլ: Երկրորդ տեղում է մեկ այլ աշխարհահռչակ հոկեյիստ Գորդի Հոուն՝ 801 գոլ:

Գերմանացի ֆուտբոլիստներին խոշոր պարգեւավճար է խոստացված

Եվրոպայի առաջնությունում հաղթելու դեպքում Գերմանիայի հավաքականի ֆուտբոլիստները գերմանական ֆուտբոլի պատմության մեջ ամենախոշոր պարգեւավճարը կստանան: Ֆուտբոլիստներից եւ մարզիչներից յուրաքանչյուրը 100 հազար եվրո կստանա: Հետաքրքրական է, որ աշխարհի նախորդ առաջնությունում առաջին տեղը գրավելու համար Ռուդի Ֆոլլերի սաներին 92 հազարական եվրո էր խոստացվել: Պորտուգալիայում եզրափակիչ հասնելու դեպքում պարգեւավճարը կկազմի 70 հազար եվրո: Եթե հավաքականը պայքարից դուրս մնա կիսաեզրափակիչում կամ քառորդ եզրափակիչում, ապա պարգեւավճարը համապատասխանաբար կկազմի 60 եւ 35 հազարական եվրո: Հետաքրքրական է, որ ինչպես Եվրոպայի նախորդ առաջնությունում, այնպես էլ Պորտուգալիայում խմբային մրցաշարի արգելքը չհաղթահարելու դեպքում ֆուտբոլիստները պարգեւավճար չեն ստանա:

Նման որոշում է ընդունվել Գերմանիայի ֆուտբոլային միության նախագահ Գերհարդ Մայեր-Ֆորֆելդերի եւ հավաքականի ֆուտբոլիստներ Օլիվեր Կանի, Յենսեն Նովոտնիի եւ Միխայիլ Բալակի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունում: Կողմերը շաս շուտ եկան համաձայնության: Հետաքրքրական է, որ Բալակն ու Կանը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի յուրաքանչյուր խաղին մասնակցելու համար 10 հազարական եվրո են ստացել: Հետաքրքրական է, որ 1996 թ. Եվրոպայի առաջնության չեմպիոնի տիտղոսը գնահատվում էր 52 հազար եվրո, 1990 թ. աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճելու համար ֆուտբոլիստները ստացել էին 63 հազարական եվրո, իսկ 1974 թ., երբ Գերմանիայի հավաքականը ուժեղագույնը ճանաչվեց աշխարհում, Ֆրանց Բեկենբաուերն ու նրա խաղընկերները որոշես պարգեւ ստացան մոտ 30 հազարական եվրո:

Նավրատիլովան հրաժարվեց կյա թենիսին

Ամերիկացի լեգենդար թենիսիստուհի Մարտինա Նավրատիլովան վճռել է այս տարի վերջնականապես հրաժարվել մեծ թենիսից: Մարտի 10-18-ը նա կմասնակցի մարզական իր հարուստ կենսագրության մեջ վերջին մրցաշարին: Նա հանդես կգա զուգախաղում Լայզա Ռայմոնդի հետ, որին ընկերակցել էր այս տարվա Ավստրալիայի բաց առաջնությունում: 47-ամյա Մարտինա Նավրատիլովան ներկայումս գործող թենիսիստների մեջ ամենատարիքովն է: Պրոֆեսիոնալ թենիսիստի իր հարուստ կենսագրության ընթացքում Մարտինա Նավրատիլովան բազում տիտղոսների է արժանացել:

Էջը պատրաստեց
ԱՐԱՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Կենտրոնի թաղամեսարանը խայխայիչ պատմամնմի դեմ

Կենտրոնի թաղամեսարանի որդեգրման, խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովը, մտահոգված անչափահաս Հասմիկ Գրիգորյանի ճակատագրով եւ համարելով, որ նրա մոր՝ Գայանե Սարգսյանի վարքագիծը բացասաբար է անդրադառնում երեխայի առողջության եւ ճիշտ դաստիարակության վրա, Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին աստյանի դատարան է ներկայացրել հայց, որով խնդրում է անգործունակ ճանաչել երեխայի մորը: Թաղամեսարանի հայցադիմումի մեջ նշվում է, որ Գայանե Սարգսյանն իր անչափահաս երեխային ներքաշել է աղանդավորական համայնք, այս ուսումնական տարի երեխան դպրոց չի այցելում, չի շփվում հասակակիցների հետ, նրան արգելել են հաճախել պարի եւ դաշնամուրի խմբակներ՝ համարելով, որ պարն ու երաժշտությունը պարունակում են սատանայական տարրեր: Բանը նրան է հասնում, որ «սատանաներից մաքրելու» համար փոքրիկ Հասմիկին քացախաջրով հոգնաներ են անում:

Երեկ կայացած դատական նիստում դատավոր Պարգեւ Օհանյանը բավարարեց թաղամեսարանի հայցը եւ նշանակեց դատահոգեբուժահոգեբանական փորձաքննություն: Ընթերցողին հիշեցնենք, որ «Ազգը» բազմիցս անդրադարձել է այս պատմությանը: Հասմիկ Գրիգորյանի մայրը ներքաշվել է քայքայիչ պատմամնմի մեջ՝ դառնալով ՆԳՆ պոլիկլինիկայի նախկին նյարդաբույժ Սոնա Ֆահրադյանի զոհը, որն օգտագործելով արգելված հիպնոս՝ մարդկային ճակատագրեր է խեղում: Նրանք, ովքեր հոգեպես փոքր-ինչ անհավասարակշիռ են եւ ունեն անձնական խնդիրներ, հեշտությամբ են ընկնում տիկին Սոնայի ծուղակը, եւ Գայանեն բացառություն չէ: Ինչո՞ւ է Սոնա Ֆահրադյանը զբաղվում հոգեորսությամբ: Պատճառը պարզ է՝ ընտանիքը քանդելու դեպքում առաջանում է բնակարանը վաճառելու անհրաժեշտություն, իսկ վաճառից, ինչպես հայտնի է, գումար է գոյանում, որը եւ իրականում հետաքրքրում է այս տիկնոջը: Եվ ոչ միայն նրան. ունենալով կապեր, ներքին գործերի համակարգի նախկին աշխատակցին հաջողվում է անորսալի մնալ:

Երեկ Գայանե Սարգսյանը դատական նիստին չէր ներկայացել: «Ինչո՞վ կբացատրեք նրա դատարան չներկայանալը», հարց էր տալիս Կենտրոնի թաղամեսարանի որդեգրման, խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի քարտուղար Գայանե Հախվերդյանը եւ նշում, որ նորմալ, հավասարակշիռ վիճակում գտնվող մայրը հաստատ կներկայանար դատարան եւ կպայքարեր, երբ խոսքն իր երեխային է վերաբերում:

Գայանեի փոխարեն դատարան էր ներկայացել նրա լիազորված անձը՝ Նաիրա Դովլաթյանը: Ի դեպ, դատական նիստից հետո հետաքրքրական միջադեպ եղավ: Նաիրա Դովլաթյանը կամ Նանան, ինչպես նրան անվանում են, եւս քայքայիչ պատմամնմի հետեւորդ է եւ այժմ ամուսնալուծության ճգրիռ է: Դատարան եկած ժաննա Դովլաթյանը՝ Նանայի մայրը, փորձեց զրուցել դստեր հետ, բայց՝ ապարդյուն: Այդ փորձն ընդամենը քաշքշուկի եւ վիճաբանության վերածվեց. Սոնա Ֆահրադյանն արգելում է իր «հիվանդներին» հաղորդակցվել հարազատների հետ:

Նշենք, որ Հասմիկ Գրիգորյանի գործի առնչությամբ առաջին դատավարությունը չէ, որ ընթանում է. Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին աստյանի դատարանը երեխային հոր խնամակալությանը հանձնելու որոշում էր կայացրել: Գայանե Սարգսյանն առաջին աստյանի դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել, որի դատաքննությունը դեռ նշանակված չէ: Դատական այս խառնաշփոթը թերեւս երկար կշարունակվի, բնական է: Այս երկարատեւ գործընթացի մեջ հասկանալի եւ բնական է նաեւ հոր՝ Նշան Գրիգորյանի անհանգստությունը: Նա պնդում է, որ անչափահաս Հասմիկի ապագան վտանգված է:

Հ. Մ.

ՄՈՍԿՎԱ

Գյուլը Պուտինին խնդրել է նպաստել ԼՂ կարգավորմանը

Օգտագործելով Հայաստանի եւ Ադրբեջանի վրա ունեցած իր ազդեցությունը

Թուրքիայի արտգործնախարար եւ փոխվարչապետ Աբդուլլահ Գյուլը փետրվարի 24-ին Մոսկվայում Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման ընթացքում ՌԴ նախագահին խնդրել է նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը՝ օգտագործելով Հայաստանի եւ Ադրբեջանի վրա ունեցած իր ազդեցությունը, հաղորդում է «Անատոլու» գործակալությունը: Գյուլն ասել է, որ Թուրքիան ցանկանում է բարելավել հարաբերությունները Հայաստանի հետ՝ հավելելով, որ առաջին հերթին Հայաստանը պետք է դուրս գա ադրբեջանական գրավյալ տարածքներից:

Երեկ Ռուսաստան այցի ավարտին Գյուլը հայտարարել է, որ Թուրքիան պատրաստ է մասնակցել ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորմանը, հաղորդում է Ինտերֆաքսը: «Այսօր հակամարտությունը «սառեցված» վիճակում է, ասել է Գյուլը՝ հավելելով, մենք ունենք լավ հարաբերություններ բոլոր երկրների հետ, որոնք առնչություն ունեն ղարաբաղյան հակամարտությանը՝ բացառությամբ Հայաստանի»: Թուրքիայի արտգործնախարարը կարծիք է հայտնել, որ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը կարող է ստեղծել պայմաններ Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները կարգավորելու համար:

Հայրենական մեծ պատերազմի կոչ ադրբեջանցի ժողովրդին

Ադրբեջանամետ ուժերի միավորումը (ԱՈՒՄ), որի շարքերում են Ադրբեջանի ծախակողմյան մի շարք կազմակերպություններ, Ադրբեջանի քաղաքական շրջանակներին եւ ժողովրդին կոչ է արել Հայրենական մեծ պատերազմ սկսել եւ «Ղարաբաղն ազատագրել հայ զավթիչներից»: ԱՈՒՄ-ն, ըստ «Ձերկալո» թերթի, Բաքվի իշխանություններից պահանջել է դադարեցնել բանակցությունները Հայաստանի նախագահ Քոչարյանի հետ, քանի որ վերջինս «հանցագործ է»: Ադրբեջանցի մեծ հայրենասերների կարծիքով, 1994 թ. հաստատված զինադադարն օգնում է միայն Հայաստանին՝ իր օգտին լուծելու ղարաբաղյան հակամարտությունը:

Ադրբեջանական բանակը կորցրեց երկու զինվոր

Ադրբեջանական բանակի երեք զինվորներ փետրվարի 24-ին Սոավ լեռան շրջանում մնացել էին ձյան տակ: Երեկ, ինչպես հաղորդում է «Նովոստին» Բաքվից, հաջողվել է փրկել զինվորներից մեկին, մինչդեռ մյուս երկուսը՝ շարքայիններ Բաղիրովը եւ Շահմարդանովը, մահացել են:

Թբիլիսին պատրաստվում է «հատուկ գործողությունների» Աջարիայում

Վրաստանի կենտրոնական իշխանությունների եւ Աջարիայի ինքնավարության հարաբերությունները շարունակում են մնալ լարված, հաղորդում է «Նովոստին» Թբիլիսիից: Փետրվարի 19-20-ը Բաթումում տեղի են ունեցել զանգվածային անկարգություններ այն ժամանակ, երբ Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Վալտեր Շվիմերը բանակցում էր ինքնավարության առաջնորդ Ասլան Աբաշիձեի հետ: Աջարիայի ուժային կառույցներն օգտագործելով հակաաբաշիձեական մի քանի հազարանոց ցույցը, զանգվածային բռնարարքներ էին իրականացրել Աբաշիձեին ընդդիմադիր «Մեր Աջարա» եւ «Ժողովրդավարական Աջարա» կազմակերպությունների ակտիվիստների դեմ՝ ջարդուփշուր անելով նրանց գրասենյակները, ծեծկալելով առաջնորդներին:

Երեկ Վրաստանի տեղեկատվության փոխնախարար Ամիրան Մեսխելին հայտարարել է, որ անհրաժեշտության դեպքում Թբիլիսին Աջարիայի տարածքում կիրականացնի «հատուկ գործողություններ»: Թբիլիսիում Աջարիայի ներկայացուցիչ Համլետ Չիքոավիլին հայտարարել է, որ «կենտրոնը նախապատրաստում է հատուկ գործողություններ Աջարիայում եւ ինքնավարության տարածք մտցնել ծանր տեխնիկա եւ հատուկ ստորաբաժանում»:

Չիքոավիլին ասել է, որ «նման հատուկ գործողությունները ողբերգական են լինելու եւ՝ Թբիլիսիի, եւ՝ Բաթումի համար»: Նախօրեին Աբաշիձեն հայտարարել էր, որ նման գործողություններ իրականացնելու դեպքում «կկրկնվեն Աբխազիայի եւ Հարավային Օսիայի իրադարձությունները, կլինեն զոհեր, ավերածություններ, այրված հող, ծգծգվող հակամարտություն եւ այդ հակամարտության կարգավորման բանակցություններ արտաքսահմանում»:

1990 թ. այս կողմ Աջարիայում ընդդիմություն չի եղել, բացառությամբ վերջին 3 ամիսների, երբ Վրաստանում իրականացվեց «թավշյա» հեղափոխություն: Աջարիայում գործող ընդդիմադիր երկու շարժումները ղեկավարվում են Միխայիլ Սաակաշվիլու եւ Զուրաբ Ժվանիայի գրասենյակներից:

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

Բարձրագույն կրթության աջակցության ծրագրի շրջանակներում հայտարարում է նորարարական դասընթացների մշակման մրցույթ՝ սոցիալական եւ հումանիտար գիտությունների եւ գենդերային կրթության բնագավառում:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 2004 թ. մարտի 31-ը հետեւյալ հասցեով՝ Երեւան, Պուշկինի 1, բն. 2: Անհրաժեշտ է ներկայացնել նաեւ նամակ-համաձայնագիր այն բուհերից, որտեղ նախատեսվում է կիրառել դասընթացը: Հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ հետեւյալ հեռախոսահամարներով՝ 542119, 541719, 543901 կամ էլ. փոստով՝ armenuhi@osi.am.

ՀՇՏԱՊԻՍ

Փետրվարի 20-ի «Ազգ»-ի 8-րդ էջում զետեղված RAA կազմակերպության գովազդի մեջ զետեղված «Հայտերը ներկայացնել մինչեւ **փետրվարի 31-ը**» բառերի փոխարեն պետք է լինի «Հայտերը ներկայացնել մինչեւ **փետրվարի 29-ը**»:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի Հաճախորդների բանկային հաշիվների/ավանդների վարման և էլեկտրոնային բանկային ծառայությունների տրամադրման հիմնական պայմաններում և Ծառայությունների սակագներում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, որոնք համապատասխանաբար ուժի մեջ կմտնեն 2004 թվականի մարտի 1-ից և ապրիլի 1-ից:

Լրացուցիչ տեղեկությունների և մանրամասների համար խնդրում ենք դիմել Բանկի Գլխավոր Մասնաճյուղ (Վ. Սարգսյան 9) կամ Կոմիտաս Մասնաճյուղ (Կոմիտասի պողոտա 3):

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի Տնօրինություն

HSBC

Ձեր բանկն ամբողջ աշխարհում

For Your Internal News of Armenia Log on to

www.azg.am

In Armenian, Russian, English and Turkish

ՀՀ Կենտրոնական բանկը 27.02.2004 թ. ժ. 9.00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	564.32	558.70	570.00
EUR	1	եվրո	702.24	698.00	706.50
RUR	1	ռուս. ռուբլի	19.79	18.60	21.00

Փետրվարի 27-ին, ժամը 19.00-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը:
Մենակատար՝ Բեռնարդ Ռինգեսեն, դաշնամուր
(Ֆրանսիա)
Դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան
Ծրագրում՝
Սեն-Սանս՝ Դաշնամուրի կոնցերտ թիվ 2
Շոստակովիչ՝ Սիմֆոնիա թիվ 10
2003/2004 համերգաշրջանի հովանավոր
Հայկական բարեգործական ընդհանուր միություն
Տոմսերը վաճառվում են Արամ Խաչատրյան համերգասրահի տոմսարկղում:

գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70/ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 26. 02. 2004 Գինը՝ 100 դրամ